2026, ՄԱՅԻՍ Ա, ԹԻՎ 9 (701)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հաղթանակի և խաղաղության օրվա առիթով



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հաղթանակի և խաղաղության օրվա առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս: Մայիսի 9-ը մեզ համար թանկ հիշատակների օր է, երբ պանծացնում ենք մեր ժողովրդի զավակների սխրանքները Երկրորդ համաշխարհային պատերազմում և Արցախյան հերոսամարտում:

Հայրենական մեծ պատերազմում կերտված փառավոր հաղթանակը վկայությունն է ժողովուրդների համախմբյալ և միասնական պայքարի՝ ընդդեմ ֆաշիզմի, ընդդեմ անարդարության և չարիքի: Մեր ժողովուրդն իր կարևոր ավանդն է ունեցել այս հաղթության մեջ:

Տասնամյակներ շարունակ այս օրը մեզ համար նշանավորվել է նաև Արցախյան զոյամարտի հաղթանակով: Այսօր, երբ բռնազավթված և հայաթափված է Արցախը, պարտավոր ենք շարունակել հետամուտ լինել հայրենազրկված արցախահայության իրավունքների պաշտպանությանը: Անցյալի այս իրադարձությունները մեզ պետք է ամուր և հաստատակամ պահեն զորեղ ու անվտանգ պետության կերտման մեր տեսիլքների իրագործման ճանապարհին:

Հաղթանակի և խաղաղության օրը մեզ պետք է հիշեցնի դժվարին այդ օրերին մեր ժողովրդի դրսևորած միասնականության, քաջարի ոգու և հանուն ազգի ու հայրենիքի, հանուն խաղաղության մեր հերոսների զոհողության մասին: Այս նվիրական օրն իր խորհրդով նաև պետք է ամրապնդի մեզանում նախանձախնդրությունն ու պարտավորությունը՝ հոգատարություն դրսևորելու պատերազմի վետերանների, զոհվածների և անհայտ կորածների ընտանիքների հանդեպ:

Աղոթում ենք Մեծ հայրենականում և Արցախյան հերոսամարտում իրենց կյանքն ընծայած հայորդիների հոգիների համար, որոնց հայրենասիրությունն այսօր էլ ոգեշնչող օրինակ է սերունդների համար՝ նույն պատասխանատվությամբ ու նվիրումով ապրելու, արարելու և պայքարելու՝ ի սեր հայրենի մեր երկրի:

Առ Բարձրյալն աղոթքով հայցում ենք աշխարհին խաղաղություն և ժողովուրդներին՝ բարօրություն: Թող Հարուցյալ Տերն Իր Աջի հովանու ներքո անվտանգ ու ապահով պահպանի մեր հայրենիքն ու համայն ժողովրդին՝ հույսով և հավատով ամուր ու սիրով՝ միասնական:

Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ամենեսեսեանս. Ամէն:

9 մայիսի, 2026 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց «Հաղթանակ» զբոսայգի

Մայիսի 9-ին՝ Հաղթանակի ու խաղաղության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց «Հաղթանակ» զբոսայգի:

Անհայտ զինվորի հուշակոթողի մոտ ծաղկեպսակի զետեղումից հետո Վեհափառ Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան հերոսամարտերում զոհված ու հայրենիքի համար իրենց կյանքն ընծայաբերած քաջ հայորդիների հոգիների հանգստության և խաղաղության համար:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց Համբարձման տոնը

Մայիսի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանից ու Սփյուռքից թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ և բազում ուխտավոր հայորդիներ:

Իր քարոզում պատարագիչ Մուշեղ եպիսկոպոսը, անդրադառնալով տոնի խորհրդին, նշեց, որ Քրիստոսի Համբարձումն ականատեսների վկայությամբ հաստատված իրողություն է, երբ երկինքն ու երկիրը միավորվում են մեկ տեսիլքի մեջ, և հավատավոր ժողովուրդը վերստին զգում է Աստծո հավիտենական ներկայությունն իր կյանքում:

«Ավետարանիչների կենդանի նկարագրությամբ մենք տեսնում ենք, թե ինչպես է Քրիստոս մարմնով հեռանում երկրից, բարձրանում երկինք ու անհետանում ամպերի մեջ: Մարդկայնորեն կարող է թվալ, թե մենք մնացինք մենակ՝ մեր հոգսերին, մեր ցավերին ու մեր առօրյա դժվարություններին դեմ հանդիման:

Բայց... Համբարձման իրական պատգամը լրիվ հակառակն է: Համբարձումը բաժանումի մասին չէ, այն մարդկային բնության փառավորման պատմությունն է: Քրիստոս չհեռացավ, որ մեզ լքի, այլ համբարձվեց, որպեսզի լինի ամենուր և ամենքիս հետ»,– նշեց Մուշեղ եպիսկոպոսը՝ հավելելով, որ Հիսուս Քրիստոսի համբարձումը քրիստոնեական հավատքի կարևորագույն հիմնասյուներից է, որով բացահայտվում է մարդու փրկագործության ամբողջական պատկերը: Խոսելով փորձությունների ու մարտահրավերների ժամանակ Աստծուն որոնելու մարդու ներքին ձգտման մասին՝ Սրբազան Հայրն ընդգծեց. «Հաճախ Աստծուն փնտրում ենք հեռուներում, մինչդեռ Նա ներկա է մեր առօրյայի ամենափոքր թվացող պահերի մեջ:

....Աստված սիրում է մարդուն՝ մարդու միջոցով: Արդ, չփնտրենք Աստծուն միայն հրաշքների մեջ: Փնտրենք Նրան համբերության, ներողամտության և սիրո մեջ: Եվ կտեսնենք, որ մեր Տերը երբեք մեզ չի լքել, Նա այստեղ է՝ մեր մեջ, մինչև աշխարհի վախճանը: Աստծուն գտնելու համար պետք չէ փախչել իրականությունից, պետք է Աստծուն փնտրել իրականության մեջ»:

Պատարագիչ Սրբազանն անդրադարձ կատարեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու պատմական իրողությանը՝ հաստատելով, որ Սուրբ Էջմիածինը Աստծո և մարդու հանդիպման տեսիլքն է, որի միջոցով և որտեղ հայ մարդը, Միածնի էջքով առաջնորդված, գտնում է իր հոգու փրկության ճանապարհը: «Կաթողիկոսական Աթոռի վերադարձով՝ Սուրբ Էջմիածինը հայրենիքի ու պետականության հիշողությունը դարձրեց իրական և ապրող նպատակ, որից ծնվեցին հավաքական պատասխանատվության, ազգային միասնականության գիտակցությունը և ազատագրական պայքարի տարբեր նախաձեռնումներ:

....Սուրբ Էջմիածինը դարձավ այն առանցքը, որի շուրջ համախմբվեց աշխարհասփյուռ հայությունը: Միասնական ազգային, հոգևոր, մշակութային կենտրոնի շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր ազգային դիմագիծն ու ինքնությունը, և քանի դեռ պետականությունը բացակայում էր,

➥ էջ 2

Հայտարարություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է Կովկասի մուսուլմանների վարչության հայտարարությունը, որով փորձ է արվում արդարացնել Ադրբեջանի իշխանությունների կողմից Արցախի հայկական հոգևոր-մշակութային ժառանգության ոչնչացումը, մասնավորապես՝ Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցու հիմնահատակ ավերումը:

Սրբավայրերի պղծումը, յուրացումը կամ ոչնչացումը չեն կարող արդարացվել որևէ քաղաքական, վարչական կամ կեղծ իրավական ձևակերպմամբ: Արցախի անկախության շրջանում կառուցված եկեղեցիները «ապօրինի շինություն» որակելը մերժելի է, և այդ պատճառաբանությամբ սրբավայրերը կործանելը, հողին հավասարեցնելը կրոնական ու մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային սկզբունքների բացահայտ ոտնահարում են և մշակութային եղեռնագործություն:

Բացահայտ անհիմն և ստահոդ է Կովկասի մուսուլմանների վարչության մեղադրանքը Հայոց Եկեղեցու հասցեին՝ Հայաստանի ու Ադրբեջանի միջև խաղաղության հաստատմանը խոչընդոտելու վերաբերյալ: Խաղաղությունը խոչընդոտվում է պատմական ճշմարտության կեղծմամբ, բռնի տեղահանված արցախահայերի իրավունքների ոտնահարմամբ, Արցախի հայկական ժառանգության յուրացմամբ և հայկական հետքի հետևողական վերացմամբ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կոչ է անում միջազգային կրոնական և իրավապաշտպան կազմակերպություններին, մշակութային ժառանգության պաշտպանության բոլոր պատասխանատու կառույցներին գործուն քայլեր ձեռնարկել՝ կասեցնելու Ադրբեջանի կողմից հայկական մշակույթի ոչնչացման ծրագրված քաղաքականությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորել է Վրաց Ուղղափառ Եկեղեցու նորընտիր Կաթողիկոս-Պատրիարքին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Վրաց Ուղղափառ եկեղեցու նորընտիր Պետ՝ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Շիո Երրորդին:

Վեհափառ Հայրապետի շնորհավորական նամակում մասնավորապես ասվում է. «Ձեր ընտրությունը վառ վկայությունն է Վրաց Եկեղեցուն ու ժողովրդին բերած Ձեր տարիների նվիրյալ սպասավորության: Մեր աղոթքն է, որ Ամենակալ Տերն Իր առատ շնորհներով մշտապես զորավիգ լինի Ձեզ հայրապետական բարձր առաքելության մեջ՝ խաղաղության ու օրհնության շավիղներով առաջնորդելու բարեպաշտ վրաց ժողովրդին:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, Հայոց և Վրաց Եկեղեցիների միջև դարավոր եղբայրական կապերը՝ խարսխված մեր Տեր Հիսուս Քրիստոսի սիրո և հարուստ հոգևոր ու պատմական ժառանգության վրա, վստահ ենք՝ Ձեր Պատրիարքության օրոք ևս կշարունակեն ամուր հիմք ծառայել մեր Եկեղեցիների, ժողովուրդների և պետությունների գործակցության համար»:

Նորին Սրբությունը Շիո Երրորդ Կաթողիկոս-Պատրիարքին մաղթել է քաջառողջություն, երկար տարիների արգասաբեր հովվապետական ծառայություն՝ ի փառս Աստծո և ի բարօրություն Վրաց Եկեղեցու ու հավատավոր վրաց ժողովրդի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց ազգային բարերար Սամվել Կարապետյանին

Մայիսի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց տնային կալանքի տակ ապօրինաբար գտնվող ազգային բարերար տիար Սամվել Կարապետյանին:

Նորին Սրբությունը մեծանուն հայորդուն բերեց Սուրբ Էջմիածնի օրհնությունը և բարեմաղթեց տոկունությամբ ու հավատով դիմագրավելու առկա դժվարություններն ու փորձությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ հակառակ այս նեղությունների՝ տիար Սամվել Կարապետյանը հուսառատությամբ, հայրենասեր ու եկեղեցասեր՝ իրեն բնորոշ ոգով պիտի շարունակի ազգօգուտ իր ծանրակշիռ ներդրումը բերել հանուն հայրենիքի և աշխարհասփյուռ հայոց կյանքի պայծառության:

Կատարվեց քահանայական ձեռնադրություն

Մայիսի 3-ին՝ Սուրբ Խաչի երևման տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում հընթացս Սուրբ Պատարագի կատարվեց քահանայական ձեռնադրություն:

Պատարագիչն էր Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, որի ձեռամբ քահանայական ձեռնադրության և օծման արժանացան Մայր Աթոռի տարբեր կառույցներում և թեմերում սպասավորող յոթ սարկավագներ:

Սուրբ Պատարագի ընթացքում Նաթան Սրբազանը, քահանայության կոչելով նորընծաներին, Սրբալույս Մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը, ինչպես նաև նորաօծ եկեղեցականներին շնորհեց նոր հոգևոր անուններ: Բարեշնորհ Արտակ սարկավագ Անտոնյանը վերակոչվեց Տեր Անանիա քահանա, Կարո սարկավագ Ղարիբյանը՝ Տեր Մկրտիչ քահանա, Հարություն սարկավագ Զաքարյանը՝ Տեր Վահան քահանա, Գևորգ սարկավագ Կարապետյանը՝ Տեր Թովմաս քահանա, Գրիշա սարկավագ Հարությունյանը՝ Տեր Աբրահամ քահանա, Արամայիս սարկավագ Ազիզյանը՝ Տեր Ներսեհ քահանա, և Արսեն սարկավագ Ավագյանը՝ Տեր Մուշեղ քահանա:

Այնուհետև նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին:

Սրբազան Հայրն իր քարոզում ընդգծեց, որ օրը կրկնակի տոն է Հայ Եկեղեցու համար: Տոնն է

Սուրբ Խաչի երևման, և նույն օրը Եկեղեցու ընտանիքը համալրվեց յոթ նոր քահանաներով: Անդրադառնալով օրվա խորհրդին՝ Նաթան Սրբազանը ընդգծեց, որ խաչը մահվան ու տառապանքի գործիքից Քրիստոսով դարձավ կենաց ծառ, տառապանքից՝ փրկություն և պահապան՝ Աստծուն հավատարմորեն երկրպագողներին:

Այնուհետև, դիմելով նորաօծ քահանա հայրերին, Նաթան արքեպիսկոպոսն ասաց. «Սիրելի՛ քահանա հայրեր, այսօր ուխտով և աղոթքով ծնվեցիք որպես նոր մարդ, ծնվեցիք նոր անուններով և նոր կյանքի համար: Այսուհետև ձեր կյանքը մշտապես պիտի լինի մեր Տեր Հիսուս Քրիստոսինը: Տիրոջ օրինակով մարդկանց բերեք ուրախություն և արդարություն՝ երբեմն նաև անցնելով չարչարանքի ու տառապանքի միջով: Քահանայի կոչումը զոհաբերություն է՝ հանուն իր հոտի փրկության:

....Մենք՝ հոգևորականներս, իբրև զինվորյալներ, պիտի կանգնենք Հայոց Եկեղեցու պաշտպանության առաջին շարքերում՝ խոսքով, գործով, աղոթքով, նվիրումով և, ինչու չէ, նաև սեփական անձի զոհաբերությամբ: Ոչինչ չի կարող մեզ՝ Հայ Եկեղեցու հոգևորականներիս, հեռացնել մեր առաքելությունից»:

Սրբազան Հայրը վերջում աղոթք բարձրացրեց առ Աստված՝ նորաօծ քահանա հայրերին մաղթելով ուժ, կարողություն և անսասան հավատարմություն իրենց ուխտին:

Ապա «Ողջույնի» ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ Մայր Աթոռի միաբաններն ու ներկա հոգևորականաց դասը բարձրացան Սուրբ Խորան և շնորհավորեցին նորաօծ քահանաներին՝ համբուրելով նրանց մյուռոնադրոշմ ճակատներն ու ձեռքերը:

Նորաօծ քահանաները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանցկացնեն քառասնօրյա պատրաստության և աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում և թեմերում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց Համբարձման տոնը

➥ էջ 1

Մայր Աթոռն ստանձնեց պետության գործառույթներ՝ առանց նրան փոխարինելու հավակնության»,— ասաց Մուշեղ Սրբազանը՝ ընդգծելով, որ Սուրբ Էջմիածինը հայ ժողովրդի՝ դարերով բաբախող սիրտն է, որտեղ խտացված են հայի աղոթքը, հավատքը, պատմությունը, հարության հույսը և Աստծո առաջ կանգնելու արժանապատվությունը: Այդ սիրտը խոցել նշանակում է խոցել ժողովրդի հավատքը, հիշողությունը, միասնությունը:

Վերջում պատարագիչ Սրբազանը հորդորեց ներկաներին իրենց հայացքը դեպի երկինք բարձրացնել՝ ոչ թե հեռավորությունը չափելու, այլ հույսով ապրելու համար, քանզի Քրիստոս մեզ հետ է՝ մեր Եկեղեցու մեջ, մեր աղոթքի մեջ, մեր ժողովրդի խաչակիր ճանապարհի մեջ, Սուրբ Էջմիածնի անլռելի զանգերի մեջ: Սուրբ Պատարագի ավարտին, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք: Արարողության ընթացքում հոգևոր դասը և ներկա հավատավոր ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության, պայծառության ու շենացման համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նորաօծ քահանաներին

Մայիսի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մայիսի 3-ին՝ Սուրբ Խաչի երևման տոնին, քահանայական կոչմանն արժանացած նորաօծ յոթ քահանաներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի:

Հանդիպմանը Նաթան արքեպիսկոպոսը ներկայացրեց նորաօծներին՝ հայցելով Նորին Սրբության օրհնությունն ու պատգամը ձեռնադրյալներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց քահանա հայրերին հովվական ծառայության կոչվելու առիթով՝ նրանց փոխանցելով իր հայրական պատգամն ու օրհնությունը:

Նորին Սրբությունն անդրադարձավ քահանայական կոչմանն ու առաքելությանը՝ կարևորելով եկեղեցականի պատասխանատու և նվիրյալ ծառայությունը՝ ի նպաստ եկեղեցու պայծառության և հայրենիքի բարօրության ու առաջընթացի:

Վեհափառ Հայրապետը պատգամեց երիտասարդ հոգևորականներին իրենց սպասավորության մեջ լինել նախանձախնդիր և հաստատակամ, հոգու ամրությամբ և արիությամբ դիմագրավել բոլոր փորձություններին ու դժվարություններին, հայրենիքի, եկեղեցու և ժողովրդի հանդեպ անսակարկ սիրով, զոհողության և հանձնառության ոգով բարի օրինակ լինել հավատացյալների համար՝ զորացնելով համայնքային կյանքը և բարձր պահելով եկեղեցու բարի համբավը:

Հանդիպման վերջում Նորին Սրբությունը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց քահանա հայրերին և նրանց ընծայեց «Մաշտոց» ծիսարաններ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց միջազգային իրավաբան Ռոբերտ Ամստերդամին

Մայիսի 7-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց միջազգային իրավաբան Ռոբերտ Ամստերդամին: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Եկեղեցու դեմ սանձազերծված արշավին, շինծու մեղադրանքներով եկեղեցականների և ի պաշտպանություն եկեղեցու հանդես եկած հայորդիների նկատմամբ իրականացվող բռնաճնշումներին ու ապօրինի քրեական հետապնդումներին: Այս համատեքստում կարևորվեց օրինականության, մարդու իրավունքների միջազգային չափանիշների պահպանման և արդարադատության սկզբունքների ապահովման անհրաժեշտությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայորդյաց տների սաներին

Մայիսի 14-ին՝ Համբարձման տոնի առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանու ներքո գործող Հայորդյաց տների սաները Մայր Աթոռի շրջափակում հանդես եկան մշակութային գեղեցիկ միջոցառմամբ՝ տոնական օրն առավել ուրախ և հիշարժան դարձնելով ներկա ուխտավորների և այցելուների համար:

Միջոցառման ավարտին Հայորդյաց տների սաներին ընդունեց և իր հայրական սերն ու օրհնությունը փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ Համբարձման տոնի առիթով Հայորդյաց տների սաներն այցելել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իրենց գեղեցիկ կատարումներով առավել պայծառացնելով տոնական օրը: Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ Հայորդյաց տներն իրենց նպաստն են բերում սաների շնորհների ու տաղանդների բացահայտման, նրանց հոգևոր-բարոյական և ազգային նկարագրի կերտման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևորեց նաև Հայաստանի տարբեր քաղաքներում Հայորդյաց տների գործունեությունը՝ հորդորելով մանկավարժներին և սաներին եկեղեցական ու ազգային տոների առիթով իրենց համայնքներում ևս պարբերաբար հանդես գալ հոգևոր-մշակութային միջոցառումներով՝ ի նպաստ քրիստոնեական արժեքների և ազգային ավանդույթների հանրահռչակման:

Վերջում Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Հայորդյաց տների հոգևոր տեսուչին, տնօրեններին, մանկավարժներին և հոգևոր սպասավորություն իրականացնող քահանա հայրերին՝ նվիրյալ և նախանձախնդիր աշխատանքի համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Համբարձման տոնի ակունքները Հին Կտակարանում

Համբարձման տոնը քրիստոնեական եկեղեցու տոնացույցի կարևորագույն հանգրվաններից է: Այդ օրը նշվում է Հիսուս Քրիստոսի համբարձումը, երբ մեր Տերն աշակերտների ներկայությամբ երկինք բարձրացավ՝ նշանավորելով Իր երկրային գործունեության ավարտը: Զատկից քառասուն օր հետո նշվող այս իրադարձությունը բովանդակում է աստվածաբանական կարևոր իմաստներ և խորհրդանշում Քրիստոսի առաքելության կատարումը:

Համբարձման թեման կարևոր տեղ է զբաղեցնում նաև սուրբգրային աստվածաբանության մեջ՝ հանդես գալով իբրև կապող օղակ Հին և Նոր Կտակարանների միջև: Հին Կտակարանում համբարձմանը վերաբերող դրվագներն ունեն որոշակի ընդհանրություններ, ինչպիսիք են ուսուցման շրջանը և վերջին զրույցը՝ նախքան երկինք համբարձվելը: Վերջինս հիմնականում դիտարկվում է վախճանաբանական համատեքստում, իսկ երկինք համբարձվածների մահվան վերաբերյալ վկայությունները հստակ չեն: Ենովքի ու Եղիայի մասին աստվածաշնչյան պատմությունները հետագայում հիմք են դառնում հրեական վախճանաբանական համատեքստ պարունակող այլ գրվածքների ստեղծման համար:

Համբառնալու պատմություններ Հին Կտակարանում

Ծննդոց 5-րդ գլուխ: Ենովքի պատմությունը: Հին Կտակարանի նահապետներից Ենովքը Հարեդի որդին էր, որին նա ունեցել է 162 տարեկանում: Ենովքը 165 տարի ապրելուց հետո ծնեց Մաթուսաղային, ապրեց աստվածահաճո կյանքով, և ոչ ոք նրան չտեսավ. «Ենովքը սիրելի եղավ Աստծուն: Նա անհայտացավ, որովհետև Աստված նրան տարավ Իր մոտ» (Ծննդ. Ե 24): Ենովքն աստվածաշնչյան առաջին կերպարն է, որ, ունենալով առանձնահատուկ կապ Աստծո հետ, փոխադրվեց երկինք: Իբրև Ադամի սերնդի մեջ յոթերորդը՝ նա բացարձակապես տարբերվում է Կայենի յոթերորդ սերնդից՝ Ղամեքից, որի կյանքը, համաձայն Ծննդ. Դ 23–24 համարների, լցված է իրական արյունահեղությամբ ու սպառնալիքներով: Հետաքրքրական է, որ եբրայերենում Ենովքի և Աստծո միջև եղած կապը բնորոշվում է մեկ այլ գեղեցիկ արտահայտությամբ. «Ենովքը քայլում էր Աստծու հետ», ինչը, անշուշտ, առավել տեսանելի պատկեր է հաղորդում ընթերցողին: Հրեա շատ մեկնիչներ զանազան մեկնաբանություններ են տվել այս արտահայտությանը՝ նշելով, որ այն կարող է տարբեր իմաստներ ունենալ, օրինակ՝ «Ենովքը երկյուղով էր լցված Տիրոջ առաջ», կամ՝ «Ենովքը ակնածանքով ծառայում էր Տիրոջը»: Հրեա հայտնի մեկնիչներից մեկն այս կերպ է բնութագրում վերոհիշյալ արտահայտությունը. «Նա արդար էր, բայց ոչ հաստատուն և կարող էր շեղվել դեպի չարը: Ուստի, Տերը՝ Աստված, շտապեց հեռացնել նրան այս աշխարհից և ժամանակից շուտ խլեց նրա կյանքը: Նրա մահից առաջ Սուրբ Գիրքը օգտագործում է անսովոր մի արտահայտություն՝ «և նա չկար, չէր գտնվում» այս աշխարհում: Այսպես եղավ, որպեսզի նա հասնի իր կյանքի տարիների լիությանը, մինչդեռ այլոց մահվան մասին ասվում է՝ «և մեռավ»: Սա նշանակում է բացակայություն զգայական աշխարհից, իսկ «և նա չկար, չէր գտնվում» արտահայտությունը ցույց է տալիս այն ճանապարհը, որով հոգին լքում է այս աշխարհը:

Եկեղեցական հայրերն այս հատվածն այլ կերպ են մեկնաբանում. տեղի ունեցածը բնորոշվում է իբրև Սուրբ Հոգու կողմից կատարված գործողություն, և շեշտվում է այն հանգամանքը, որ մարդու ֆիզիկական գոյությունը որևէ կերպ չի խանգարում նրա սուրբ լինելուն: «Ենովքը և Եղիան երկինք համբարձվեցին առանց մահվան տանջանքի, սակայն գալու է այն օրը, որ նրանք ևս կմեռնեն՝ իրենց արյունով Նեռին մարելու համար»,– կարդում ենք Տերտուղիանոսի հայտնի գրվածքներից մեկում: Նմանատիպ արտահայտություններ հանդիպում են նաև Ծննդ. ԽԲ 13, ԽԲ 36 և Գ թագ. Ի 40 համարներում, և որպեսզի ավելի հասկանալի դառնա, որ տվյալ բառակապակցությունը սովորական մահվան մասին չէ, Յոթանասնից թարգմանությունն օգտագործում է «չգտնվեց» արտահայտությունը:

Հարկ է նշել, որ հաճախ էլ Ենովքի մասին այս պատմությունը որոշ ուսումնասիրողներ համարել են գեղարվեստական հորինվածք: Շատ կարևոր է շեշտել, որ Սուրբ Գիրքը բացահայտ կերպով չի նշում և չի էլ հաստատում, որ Ենովքը մահացել է: Նոր Կտակարանում էլ այս կերպարը պատկերվում է իբրև այնպիսի մեկը, որն իր ունեցած հավատի շնորհիվ փոխադրվեց երկինք, որպեսզի մահ չճաշակի. «Հավատո՛վ Ենովքը փոխադրվեց երկինք, որպեսզի մահ չճաշակի. եւ նա ոչ մի տեղ չգտնվեց, քանի որ Աստված նրան տարել էր: Եվ նախքան իր տարվելը՝ նրան վկայություն էր տրվել, որ ինքը հաճելի էր Աստծուն» (Եբր. ԺԱ 5):

Եղիա և Եղիսե: Հետաքրքրական է, որ հինկտակարանյան բոլոր մարգարեներից Եղիան միակն է, որի մասին գրված է, որ համբարձվել է երկինք: Ինչպես նշում է ժամանակակից ուսումնասիրողներից մեկը. «Նույնիսկ Մովսեսը՝ մինչ այժմ ամենամեծ մարգարեն, Տիրոջ խոսքի համաձայն՝ պետք է մահանար Մովաբի երկրում, և նրա գերեզմանը պիտի մնար անհայտ (Բ Օրենք ԼԴ:5–6)»: Եղիայից բացի՝ Ենովքի մասին է միայն գրված, որ նա երկինք տարվեց Աստծո կողմից, և ոչ ոք նրան չգտավ (Ծննդ. Ե 21–24):

Աքաբին ու Հեզաբելին կռապաշտության պատճառով հակառակելուց և դատապարտելուց բացի՝ Եղիան հակադրվեց նրանց նաև իրենց ագահության ու գործած անարդարությունների պատճառով: Երբ Աքաբն ու իր կինը սպանեցին հեզրայելացի Նաբոթին և խլեցին նրա այգին, Եղիան նրանց հայտնեց Աստծո դատաստանը (Գ Թագ. ԻԱ 20–24): Աքաբի որդի Օքոզիան, որը գահ բարձրացավ նրա մահից հետո, շարունակեց Բահաղին երկրպագելը՝ դարձյալ հանդիպելով Եղիայի հակառակությանը: ➥ էջ 5

Լինելության ուխտը

Հայոց ոգու սխրանքը Հայրենական պատերազմում և Արցախյան գոյապայքարում

Ընտրության մետաֆիզիկան որպես գոյության առանցք

Մարդկության պատմությունը միայն իրադարձությունների հաջորդականություն չէ, այն նաև ընտրությունների պատմություն է: Սակայն կան ազգեր, որոնց ընտրությունները հակասում են բանական հաշվարկների, քաղաքական շահերի կամ կենսաբանական ինքնապահպանման տրամաբանությանը: Այդպիսի ազգերի գոյությունը բացատրվում է ոչ թե արտաքին գործոններով, այլ մետաֆիզիկական ներքին ծածկագրերով: Այդպիսի ազգերը չեն հարատևում հասարակագիտական կամ պատմական սովորական կաղապարներով: Հայ ժողովուրդը հենց այդպիսի գոյաբանական առեղծված է, բացառիկ մի երևույթ:

«Լինել-չլինել»-ը մեզ համար երբեք չի եղել շեքսպիրյան երկսայրաբանություն (դիլեմա)՝ կախված հանգամանքներից: Այն եղել է ու մնում է ուխտ: Ոչ թե հարց, այլ պատասխան: Ոչ թե տատանում, այլ վճիռ:

Այդ ընտրությունն իր զտարյուն աստվածաբանական արտահայտությունն ունի Ավետման խորհրդի մեջ: Երբ Աստվածամայրը լսեց հրեշտակի խոսքը, նա կանգնած էր ոչ միայն օրհնության, այլև ցավի, ոչ միայն փառքի, այլև խաչի առջև: Նրա «այո»-ն չէր բխում անտեղյակությունից, այլ գիտակցված ընդունումից: Նա գիտեր, որ այդ «այո»-ն իրեն տանելու է դեպի Գողգոթա, դեպի սիրտը խոցող սուր, բայց նա ընտրեց լույսը, քանի որ հավատում էր փրկությանը:

Հայ ժողովրդի պատմական «այո»-ն նույն բնույթի է՝ գիտակցված տառապանքով դեպի փրկության ճանապարհ: Այդ հավաքական «այո»-ն գործող սխրանք էր, որ վեր է կենսաբանական գոյության բնազդներից:

Ժամանակի սրբագործում. հաղթանակի ներքին իմաստ

Հայոց պատմության մեջ ժամանակը երբեք չեզոք հարթություն չէ. այն մշտապես լցված է խորհրդով: Մայիսի 9-ը դրա ամենավառ օրինակն է: Ժամանակի սրբագործումը հայոց գիտակցության մեջ նշանակում է պատմական իրադարձությունը տեղափոխել հավերժության հարթություն: Ժամանակը մեզ համար սոսկ վայրկյանների հաջորդականություն չէ, այլ մի «բարենպաստ» շրջան, երբ մարդկային ջանքը հանդիպում է աստվածային տնօրինությանը: Մայիսի 9-ը հենց այդպիսի սրբագործված հանգրվան է հայոց համար, որտեղ միահյուսվում են սերունդների հաղթանակները՝ վերածվելով մեկ միասնական Ոգու հաղթության: Դա հիշեցնում է աստվածաշնչյան խոսքը. «Ամեն ինչ իր ժամանակն ունի երկնքի տակ» (Ժող. Գ 1), և հայ ժողովուրդը կարողացավ այդ ժամանակը լցնել ազատագրության և արդարության բովանդակությամբ:

Շուշիի ազատագրումը մայիսի 9-ին ոչ միայն ռազմավարական նվաճում էր, այլև պատմական արդարության սրբագրում: Այնտեղ, որտեղ տասնամյակներ շարունակ տիրում էին անարդարությունն ու բռնազավթումը, վերահնչեցին Աստծո խոսքը և հայոց աղոթքը: Սա նման է Երիքովի պարիսպների փլուզմանը (Հեսու Զ 20), երբ հաղթանակը ձեռք բերվեց ոչ միայն զենքի ուժով, այլև հավատքի և միասնական կամքի պայթյունով: Մայիսի 9-ը դարձավ այն կետը, որտեղ հայը սրբագործեց ժամանակը՝ ապացուցելով, որ կորուսյալը կարող է վերադարձվել, եթե այն պահված է ազգային ուխտի և հիշողության մեջ: Սա այդ հաղթանակի ներքին խորհուրդն է, երբ վերականգնվեց հայ ժողովրդի կապը իր սրբազան և աստվածատուր տարածության հետ: Մենք հասկացանք, որ «Տերը չի լքի Իր ժողովրդին և Իր ժառանգությունը երեսից չի ձգի» (Սաղմ. ՂԳ 14):

Մայիսի 9-ը մեզ սովորեցրեց նաև, որ հաղթանակը ոչ թե վերջնակետ է, այլ պատասխանատվություն՝ պահպանելու և շարունակելու սրբագործված ժամանակի ընթացքը: Ժամանակի սրբագործումը Հայոց պատմության մեջ հաղթանակը դարձնում է ներքին վիճակ: Մայիսի 9-ը մեզ համար դարձավ այն հոգևոր հենակետը, որը վկայում է՝ պատմությունը գրվում է նրանց ձեռքով, ովքեր գիտեն ժամանակի մեջ զգալ հավերժության շունչը: Հաղթանակի ներքին իմաստը հենց սա է՝ դառնալ ժամանակի տերը՝ խարսխվելով այն հավատի վրա, որ արդարությունը վերջնականապես կհաղթանակի, քանի որ «Ճշմարտությունը երկրից բուսնեց, և արդարությունը երկնքից նայեց» (Սաղմ. ՁԴ 12):

Մենք դադարեցինք լինել պատմության օբյեկտ, որի հետ վարվում են այնպես, ինչպես ուզում են, և դարձանք սուբյեկտ, որը կերտում է հաղթանակը: Սա այն սուրբ հպարտությունն էր, որը բխում էր ոչ թե ամբարտավանությունից, այլ այն գիտակցումից, որ «Աստված մեզ տվեց ոչ թե վախկոտության հոգի, այլ զորության, սիրո և զգաստության» (Բ Տիմոթ. Ա 7): Պատերազմի բովում հայը վերագտավ իր արքայական և քահանայական կոչումը՝ դառնալով չարիքի դեմ մարտնչող լույսի զինվոր: Մենք վերադարձանք մեր ուխտին՝ որպես մի ազգ, որը գիտի հաղթել, քանզի իր կողքին ունի «Զորությունների Տիրոջը», Որ երբեք չի լքում իրեն հավատարիմ մնացածներին:

Շուշին միաժամանակ մեզ սովորեցնում է, որ հաղթանակը ոչ միայն ունենալն է, այլև լինելը, և այսօր էլ Շուշիի բացակայությամբ մենք պահում և պահպանում ենք կամքը լինելու և ապագա ընթացքի, որ նախանշում է՝ անկումը սկիզբն է ավելի փառավոր հարության:

Պատերազմի մեջ վերագտած հաղթողի ինքնություն

Երկրորդ համաշխարհային պատերազմը ևս հայության համար մի նոր փորձություն էր՝ ապացուցելու, որ ցեղասպանված ժողովուրդը չի կորցրել իր մարտունակությունը: Հայը դարձյալ ցույց տվեց, որ զոհ լինելը իր վերջնական ինքնությունը չէ. ինքը կարող է լինել նաև որոշող ուժ:

Պատերազմի մեջ վերագտած ինքնությունը դարձավ Հայոց պատմության այն շրջադարձը, որտեղ հայ ազգը թողեց զոհի ու սգի պատմուճանը և հագավ զինվորականի ու հաղթողի զրահը: Ինչպես աստվածաշնչյան Հեսու Նավեն, որ ստանձնեց առաջնորդությունը Մովսեսից հետո՝ անապատի սերնդին վերածելով պատերազմող և հաղթող բանակի, այնպես էլ հայ զինվորականները 20-րդ դարի պատմության թատերաբեմում դարձան մեր ազգային կամքի նոր դիմագիծը:

Հայ զինվորականների սխրանքը երկրորդ համաշխարհային պատերազմում ոչ միայն ռազմական ծառայություն էր օտար դրոշների ներքո, այլև ներքին վերականգնում: Յուրաքանչյուր հայ զինվոր, որ կռվում էր Թամանի թերակղզում կամ Բեռլինի մատույցներում, իրականում կռվում էր Դեր Զորի պարտության դեմ՝ ապացուցելով, որ իր բազկի մեջ դեռ բաբախում է Հայկ Նահապետի և Վարդան Մամիկոնյանի ուժը: Սա հիշեցնում է Եզեկիել մարգարեի տեսիլքը չորացած ոսկորների մասին, որոնք Աստծո շնչով կենդանացան և դարձան «մի չափազանց մեծ բազմություն» (Եզեկ. ԼԷ 10): Ցեղասպանված և «չորացած» ազգը փոխակերպվեց համաշխարհային չարիքը սանձող հզոր ուժի:

Շուշի՝ հաղթանակի խորհրդի վերածնունդ

1992 թ. Շուշիի ազատագրումը աստվածային խորհրդի վերակենդանացում էր: Երկրաշարժ, շրջափակում, նյութական աղքատություն, պատերազմ, բայց ժողովուրդը գործեց անհավանական սխրանք: Սա նույն օրինաչափությունն է, երբ արտաքին իրականությունն ասում է՝ Անկարելի է, կամ՝ Չի կարելի, հայն ասում է՝ Կարելի է, կամ՝ Պետք է: Շուշին ոչ միայն բերդաքաղաք է, այլև գաղափար, որ հաղթանակը նախ ծնվում է ներսում, հետո միայն՝ դրսում:

Առհասարակ Հայոց պատմությունը կարելի է հասկանալ միայն քրիստոնեական խորհրդաբանությամբ՝ խաչելություն—լռություն—հարություն: Սա գոյության նախախնամություն է: Շուշիի ազատագրումը հայոց հարության ապացույցներից է նորագույն ժամանակի պատմության մեջ: Դա այն պահն էր, երբ անհնարինը դարձավ իրականություն, քանի որ հայը հավատաց ավելի շատ իր ներքին աստվածատուր ուժին, քան արտաքին սպառնալիքներին:

Հայոց պատմության այս սուրբ ընթացքը՝ խաչելություն, լռություն և հարություն, մեր գոյության հոգևոր կմախքն է:

- Խաչելությունը մեր բազմաթիվ կորուստներն ու տառապանքներն են, որոնք մենք կրում ենք որպես ազգային Պատարագ:
- Լռությունը այն «անապատի» ու սպասման շրջաններն են, երբ թվում է, թե Աստված լռում է, բայց իրականում այդ լռության մեջ կոփվում է նոր ծիլը:
- Հարությունը Սարդարապատն է, Բաշ-Ապարանն է, Շուշին է, մեր լեզուն ու Եկեղեցին են, որոնք միշտ հառնում են՝ գերեզմանի քարը դեն նետելով:

Ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Մենք ամեն կողմից ճնշված ենք, բայց ընկճված չենք. տարակուսած ենք, բայց հուսահատ չենք. հալածված ենք, բայց լքված չենք. տապալված ենք, բայց կորսված չենք» (Բ Կորնթ. Դ 8—9):

Լույսը խավարի մեջ. գոյաբանական դիմադրություն

«Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց» (Հովհ. Ա 5): Այս խոսքը կարելի է դիտարկել որպես հայ ժողովրդի գոյաբանական բանաձև: Խավարը միշտ եղել է՝ պատերազմներ, ցեղասպանություն, կորուստներ, բայց լույսը չի անհետացել: Ինչո՞ւ, որովհետև այն արտաքին աղբյուրից չէ, այն ներսում է: Հայոց ոգին չի սնվում հանգամանքներից. ինքն է ստեղծում իր լույսը:

Լույսի և խավարի դիալեկտիկան Հայոց պատմության մեջ դուրս է գալիս պարզ հակադրության շրջանակներից: Եթե խավարը պատմական հանգամանքների, աշխարհաքաղաքական բախումների և մարդկային չարիքի խտացումն է, ապա լույսը մեր մեջ եղած աստվածային պատկերն է, որն անհնար է ջնջել նյութապես ոչնչացմամբ: Սա այն սուրբ կայծն է, որ հայը պահել է իր հոգու խորքում՝ որպես անշեջ կանթեղ:

Հայոց ոգու այս ինքնաբավ լույսը հիշեցնում է Մովսեսի տեսած «Անկեզ մորենին» (Ելք Գ 2): Այն վառվում էր, բայց չէր սպառվում: Հայ ժողովուրդը պատմության կրակների մեջ վառվեց դարեր շարունակ, բայց այդ կրակը նրան ոչ թե մոխրացրեց, այլ կոփեց ու լուսավորեց: Մեր լույսը սնվում է ոչ թե աշխարհիկ հաջողություններից, այլ այն գիտակցումից, որ մենք «Լույսի որդիներ ենք և ցերեկվա որդիներ» (Ա Թեսաղ. Ե 5): Այս ներքին աղբյուրն է պատճառը, որ անգամ ամենամռայլ զնդաններում հայը գրել է մատյաններ, կերտել է խաչքարեր և աղոթել՝ հաստատելով, որ իրական ազատությունը ներքին վիճակ է:

Այս գոյաբանական դիմադրությունը նշանակում է լինել «աշխարհի լույսը» (Մատթ. Ե 14) այնտեղ, որտեղ տիրում են անտարբերությունն ու դաժանությունը: Հայը ցույց տվեց, որ լույս ստեղծել նշանակում է սիրել, երբ քեզ ատում են, նորից կառուցել, երբ կառուցածդ քանդում են, և հուսալ, երբ ամեն ինչ մղում է հուսահատության: Սա է մեր ուխտի գերագույն իմաստը: Այս ողջ ճանապարհը՝ ցեղասպանությունից մինչև Սարդարապատ և Շուշի, մեկ միասնական կտավի բազմաշերտ պատկերներն են: Հայոց պատմությունը ոչ միայն պարտությունների և հաղթանակների շարք է, այլև ոգու հարության և հայտնության:

Մեր բանաձևը պարզ է և միևնույն ժամանակ տիեզերական. մենք կանք, որովհետև որոշել ենք ԼԻՆԵԼ: Մենք կանք, որովհետև մեր մեջ եղած լույսը աստվածային ծագում ունի, իսկ խավարը երբեք չի կարող հաղթել Արարչի կամքին: «Քաջալերվեցեք, ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺՁ 33): Այս խոսքը մեր պատմության վերջակետն է և նոր սկիզբը: Հայոց ուխտը շարունակվում է, քանի դեռ կա այդ ներքին լույսը, որը պատմության խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չի նվաճել ու երբեք չի նվաճելու:

Սերմը, որ չի ենթարկվում մահվան օրենքին, կամ՝ մեր ոգին հարության ժառանգակիրն է

Հայ ժողովրդի պատմությունը չի կարող ավարտվել, որովհետև այն կառուցված է այնպիսի սկզբունքի վրա, որը գերազանցում է ժամանակը: Մենք սովորական ժողովուրդ չենք՝ պատմության տրամաբանությամբ, մենք սերմ ենք, սերմ, որը կարելի է թաղել, բայց անկարելի է ոչնչացնել, սերմ, որը մթության մեջ չի կորցնում ծլարձակման ունակությունը, սերմ, որը սպասում է իր ժամանակին՝ ծիլ տալու համար: Եվ ամեն անգամ, երբ թվում է, թե վերջն է, սկսվում է նոր փուլ:

Հայոց պատմությունը ոչ միայն իրադարձությունների հաջորդականություն է, այլև կամքի շարունակական արարում: Եթե աշխարհի տրամաբանությունը գործում է նյութական ուժով և հանգամանքներով, ապա հայոց գոյությունը կռված է մի անկոտրում որոշումով, որը չի ենթարկվում երկրային օրենքներին:

Մեր ուխտ սա է՝ լինել: Լինել՝ անկախ ամեն ինչից, նշանակում է լինել Աստծո կամքի վկան երկրի վրա: Քանի դեռ այդ ուխտը կենդանի է մեր սրտերում, հայը չի դառնալու պարզապես հնագիտական հիշողություն կամ անցյալի մասունք: Այլ՝ կենդանի շարունակություն, որովհետև «Աստված մեռելների Աստվածը չէ, այլ՝ կենդանիների» (Մատթ. ԻԲ 32): Այդ որոշումը ձևակերպվել է Աստվածամոր «այո»-ի խոնարհության մեջ, կոփվել է պատմության անապատներում և պոռթկացել Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Շուշիի հաղթանակներով: Մեր ոգին հարության ժառանգակիրն է. որքան թանձր է խավարը, այնքան պայծառ է դառնում մեր ներքին լույսը, և որքան խորն են մեզ թաղում հողի մեջ, այնքան ավելի զորեղ է լինում մեր ծլարձակումը:

Մեր պատգամը աշխարհին և ապագային սա է. հայ լինելը զոհի կարգավիճակ չէ, այլ պատասխանատվություն: Դա որոշում է՝ մնալու ուխտի մեջ, երբ ամեն ինչ դրդում է նահանջի: Դա որոշում է՝ կառուցելու, երբ շուրջն ավեր է, հավատալու, երբ տիրում է թերահավատությունը:

Մենք պարտվում ենք միայն այն ժամանակ, երբ դադարում ենք որոշել: Բայց քանի դեռ հայը ճանաչում է իրեն որպես պատմության մեջ ներխուժող ոգու, նա մնում է անպարտելի: Մեր ուխտը հավերժական է, քանզի այն կապված է Արարչի հետ, իսկ մեր ընթացքը՝ անկասելի, քանի որ մենք ընտրել ենք ԼԻՆԵԼԸ՝ հակառակ մահվան և հանուն Ճշմարտության:

«Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց» (Հովհ. Ա 5): Սա է հայոց ինքնությունը՝ սերմը, ուխտը և հարությունը:

Շարունակելի

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Համբարձման տոնի ակունքները Հին Կտակարանում

← էջ 3

Ի վերջո, Աստված նրան պատժեց՝ նրա մահվան վճիռը հայտնելով հենց Եղիա մարգարեի միջոցով: Դ Թագ. Բ գլխում արդեն իսկ խոսվում է Եղիայի՝ երկինք համբարձվելու և Եղիսեի՝ նրան հաջորդելու մասին: Այստեղ ներկայացված է Եղիայի կյանքի վերջին իրադարձությունը. «Մինչ նրանք քայլում էին, մի հրեղեն կառք ու հրեղեն երիվարներ երևացին, նրանց միմյանցից բաժանեցին, և Եղիան պտտահողմի մեջ դեպի երկինք վերացավ: Եղիսեն նայեց ու աղաղակեց. «Հա՛յր իմ, հա՛յր իմ, Իսրայելի կառքը եւ նրա հեծյալը»: Եւ այլևս չտեսավ նրան: Եղիսեն իր հագուստները բռնեց ու պատռելով երկու կես արեց: Նա ձեռքն առավ Եղիայի մորթե վերարկուն, որ գցել էր իր վրա: Եղիսեն վերադարձավ, գնաց կանգնեց Հորդանան գետի եզերքին, վերցրեց Եղիայի մորթե վերարկուն, որ գցել էր իր վրա, խփեց ջրերին՝ ասելով. «Եղիայի Տէր Աստված, ո՞ւր ես հիմա»: Նա խփեց ջրերին, ջրերն իրարից հեռացան այս ու այն կողմ, եւ Եղիսեն անցավ» (Դ Թագ. Բ 11–14):

Սուրբգրային բնագիրն ակնարկում է, որ Եղիայի՝ երկինք համբարձվելը ժամանակավոր բնույթ է կրում և վերջնական չէ, քանի որ պատումը ոչ մի հղում չի տալիս նրա մահվան վերաբերյալ, իսկ ուշ շրջանի հրեական ավանդության մեջ նա պիտի պատկերվի իբրև «հավերժական գործիչ», որը վերադառնալու է Տիրոջ մեծ և նշանավոր օրը (Մաղ. Դ 4–5): Եղիայի կերպարը պատկերվում է Իսրայելի մարգարեական ավանդությանը բնորոշ հատկանիշներով. նա իր խոսքով հրաշքներ է գործում, դատապարտում է թագավորներին Տիրոջ հանդեպ ցուցաբերած անհավատարմության ու զանցառությունների համար, հնազանդվում է Աստծո խոսքին և ժողովրդին ևս պատգամում հնազանդ լինել: Կատարված հրաշքը նաև ցույց է տալիս, որ Աստծո զորությունն այժմ Եղիսեի վրա է, և նրա առաքելությունը պիտի լինի կրկնակի. կռապաշտությունից հետ պահել Իսրայելում Տիրոջը հավատարիմ մնացած մարդկանց և պատրաստել դատաստան անհավատների ու օրինազանցների համար:

Համոզումը, որ մարգարեներն Աստծու կողմից վերցվում և տարվում են տարբեր վայրեր, ծնունդ տվեց այն մեկնաբանությունը, որ Եղիան, ինչպես և այլ մարգարեներ, իրենց կյանքը շարունակել են մեկ այլ տեղում: Թեև հրեղեն կառքերն ու ձիերն այստեղ հիշատակվում են առաջին անգամ, դրանք, այդուհանդերձ, նորից կհանդիպեն մեզ արդեն Եղիսեի մասին պատմություններում: Կառքի խորհրդանիշը իսրայելացիների համար տարբեր կերպ կարող էր մեկնաբանվել: Իսրայելացիների՝ Քանանի տարածքում հաստատվելու ժամանակ քանանացիներն իրենց տրամադրության տակ ունեին մեծաթիվ կառքեր, ինչը զգալի առավելություն էր տալիս, և այս համատեքստում կառքերը Իսրայելի համար ճնշող ռազմական ուժի խորհրդանիշ են: Այս կառքերն ու երիվարները խորհրդանշում են Աստծո պաշտպանությունն Իր ժողովրդին, Տիրոջ հոգևոր ուժի ներկայությունը, որոնք Իսրայելի իրական անվտանգության միակ երաշխիքն են: Եղիայի ու Եղիսեի առնչությունը և նույնիսկ «ընկերակցությունը» կառքերի հետ նշանակում է հետևյալը. այս դեպքում արդեն դրանց գործառույթն օգտագործվելու է հրեա ազգի թշնամիների դեմ: Եղիայի կատարած շատ գործողություններ արտացոլում են Մովսեսի կյանքին վերաբերող նմանատիպ որոշ դրվագներ: Մովսեսի միջոցով Աստված փրկեց Իսրայելին եգիպտական ճնշումներից և դարձրեց Իր ժողովուրդը. Եղիայի միջոցով Աստված հեթանոսությունից ու կռապաշտությունից պահպանեց Իր ժողովրդի միջից Իրեն հավատարիմ եղողներին: Երկուսն էլ նշանակալի դեմքեր են մարգարեական պատմության մեջ. Մովսեսով սկսվեց Իսրայելի և Աստծո միջև եղող միջնորդների մի շարք, իսկ Եղիան այդ շարքում հանդես եկավ որպես հիմնական հերոս: Հետաքրքրական է, որ հինկտակարանյան մարգարեներից ոչ ոք այնքան հաճախ չի հիշատակվում Նոր Կտակարանում, որքան Եղիան: Մարգարեն շատ անգամ ներկայացվում է որպես Հիսուս Քրիստոսի կյանքի և գործունեության նախօրինակ կերպար:

Նոր Կտակարանում Եղիան հիշատակվում է տարբեր համատեքստերում: Որոշ հատվածներում պարզապես խոսվում է նրա կատարած գործերի մասին, այդ թվում՝ Ղուկ. Թ 54, Հռոմ. ԺԱ 2–4, Հակ. Ե 17–18, որոշներում էլ ուղղակի կամ անուղղակի կերպով նկատելի են նրանց կատարած նույնօրինակ գործողությունները, օրինակ՝ Ղուկ. Դ 25–26 և կամ Ղուկ. Է 11–16 (հմմտ.՝ Գ Թագ. ԺԷ 10, 17–24): Այդուհանդերձ՝ Եղիայի հիմնական առանձնահատկությունը Նոր Կտակարանում նրա՝ իբրև մեսիային նախորդողի դերն է: Համատես Ավետարաններում շատ հաճախ է փորձ արվում նմանեցնելու Հիսուսին Եղիայի հետ (Մարկ. Զ 14–15, Ը 27–28, Մատթ. ԺԶ 13–14, Ղուկ. Թ 7–8, 18–19), այնինչ Հիսուս Եղիային նույնացնում է Հովհաննես Մկրտչի հետ. «Բայց ձեզ ասում եմ, որ Եղիան արդեն իսկ եկել է. բայց նրան չճանաչեցին, այլ, ինչ որ կամեցան, արեցին նրան. նույնպես եւ մարդու Որդին նրանց ձեռքով չարչարվելու է» (Մատթ. ԺԷ 12), ինչպես նաև՝ Մարկ. Թ 11–13, Մատթ. ԺԱ 13–14, Ղուկ Ա 17: Շատ հանգամանքներ, ինչպես անապատային տարածքը, հասարակությունից մեկուսի ապրելը, առավելաբար՝ արտաքին նմանությունները, այս երկու կերպարներին կապում են իրար՝ բրդյա հագուստ, կաշվե գոտի (Դ Թագ. Ա 8, Մատթ. Գ 4): Հետաքրքրական է, սակայն, որ Հովհաննես Մկրտիչը ժխտում է իր՝ Եղիա լինելու հանգամանքը Հովհ. Ա 21-ում. «Ու նրան հարցրին՝ իսկ դու ո՞վ ես, Եղիա՞ն ես: Եվ նա ասաց՝ ո՛չ, չեմ: Իսկ դու մարգարե՞ն ես: Նա պատասխանեց՝ ո՛չ»:

Եղիայի՝ երկինք վերանալու դրվագը Դ Թագ. գրքում (Բ գլուխ) և Հիսուսի համբարձման դրվագը «Գործք առաքելոց»-ում (Ա գլուխ) ունեն ակնհայտ զուգահեռներ: Հորդանան գետի ափ հասնելուն պես՝ Եղիան իր մորթե վերարկուն խփեց ջրերին և Եղիսեի հետ անցավ ցամաքած տեղով: Այնուհետև Եղիսեն խնդրեց, որ Եղիայի ոգին կրկնապատիկ իր վրա լինի, և Եղիայի՝ երկինք համբարձվելուց հետո պատռեց իր զգեստները, ապա վերցնելով նրա մորթե վերարկուն՝ դրանով խփեց ջրերին և անցավ գետի այն կողմը՝ դառնալով իր ուսուցչի արժանի հաջորդը: Ուսումնասիրողների կարծիքով՝ Ղուկաս ավետարանիչը «Գործք առաքելոց»-ում օգտագործել է այս թեման և նույնատիպ եզրաբանություն՝ ներկայացնելու համար Հիսուսի համբարձման պատմությունը:

Եղիայի՝ երկինք համբարձվելու մասին Դ Թագ. գրքի հեղինակը խոսում է առաջին համարում, սակայն բուն գործողությունը տեղի է ունենում տասնմեկերորդում: Եղիայի համբարձվելը մատնանշում է նրա երկրային գործունեության ավարտը, ինչպես որ եղավ Հիսուսի պարագայում: Հետաքրքրական է, որ շատերն առավել ուշադրություն են հրավիրում ոչ թե Եղիայի համբարձման դրվագի, այլ Եղիսեին մարգարեական ոգու կրկնապատիկ չափով փոխանցման վրա: Նույն կերպ Հիսուս Իր առաքելությունը փոխանցում է աշակերտներին՝ ասելով. «Այլ, երբ Սուրբ Հոգին իջնի ձեզ վրա, զորություն պիտի առնեք եւ ինձ վկաներ պիտի լինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում եւ մինչև երկրի ծայրերը» (Գործք Ա 5):

Եղիայի՝ հրե կառքով երկինք համբարձվելու պատմությունը հետագայում ավելի խորությամբ է զարգանում հրեական գրականության մեջ: Քրիստոնյա հեղինակներից շատերն էլ հաճախ օգտագործում են Եղիայի և Եղիսեի պատմությունը՝ այն մեկնաբանելով որպես Հիսուսի համբարձման նախապատկեր և առաքյալների գործունեության սկզբնավորման նախօրինակ:

Եղիան Սիրաք ԽԸ 9–12-ում: Աստվածաշնչի երկրորդականոն գրքերի շարքում Սիրաքի Իմաստությունն առանձնանում է



Հովհաննես Խիզանցի. Համբարձում, Ավետարան, 1287 թ.

իր աստվածաբանական և բարոյախրատական յուրահատուկ գրվածքներով: Հարկ է նշել, որ բացառությամբ հայերեն երկու ձեռագրի՝ Սիրաքի գրքի՝ հայերեն պահպանված մյուս ձեռագրերում ԽԴ–Ծ գլուխները պակասում են, իսկ հիշյալ երկուսում էլ դրանք կիսատ են:

Մեկնաբանելով Մաղ. Դ 4–5 համարները՝ հեղինակը կարծես հղում է տալիս Դ Թագ. Դ 11–12-ում ներկայացված պատմությանը: Եղիայի կատարած հրաշքների և «քաղաքական նվաճումների» պատմությունից հետո (ԽԸ 3–9) հեղինակն անցում է կատարում վերջին ժամանակներին, որոնք, ինչպես սպասվում էր, պետք է իրականացներ ինքը՝ Եղիան (ԽԸ 10): Սիրաքը նախորդիվ անդրադառնում է Հին Կտակարանի այն երկու կարևոր անձանց, որոնք համբարձվել են երկինք իրենց իսկ կենդանության օրոք՝ Ենովքը (ԽԴ 16) և Եղիան՝ արտահայտելով սպասումի զգացում՝ կապված Եղիա մարգարեի վերադարձի հետ: Եղիան երկինք տարվեց ոչ միայն իր արժանիքների, այլև երկրի վրա ժամանակների վախճանին հատուկ առաքելություն իրականացնելու համար: Համաձայն քրիստոնեական մտածողության՝ Եղիան և Ենովքը նախքան Տիրոջ գալուստը պետք է վերստին լինեն երկրի վրա. «Եվ իմ երկու վկաներին պիտի պատվիրեմ, որ մարգարեական հազար երկու հարյուր վաթսուն օրեր՝ քուրձ հագած» (Հայտն. ԺԱ 3):

Սաղմոս ճԹ: Հին Կտակարանի՝ համբարձմանը վերաբերող դրվագներում կարևոր տեղ է զբաղեցնում նաև ճԹ սաղմոսը, քանի որ, տարբեր մեկնությունների համաձայն, այստեղ խոսքը մեծապես վերաբերում է Հիսուսի երկնային «գահակալությանը»: Այս սաղմոսի կարևորության և յուրահատկության մասին է վկայում այն հանգամանքը, որ Հիսուս Նոր Կտակարանի մեջ Իր խոսքում մեջբերում է սաղմոսի առաջին համարը. «Տերն Իմ տիրոջն ասաց՝ նստի՛ր Իմ աջ կողմում, մինչև որ Քո թշնամիներին դնեմ Քո ոտքերի տակ իբրև պատվանդան» (Մատթ. ԻԱ 41–46, Մարկ. ԺԲ 35–37, Ղուկ. Ի 41–44): «Թշնամիներին ոտքի համար պատվանդան դարձնել» արտահայտությունը մերձավորարևելյան հնագույն փոխաբերություն է, որ նշանակում է կատարյալ վերահսկողություն ունենալ հակառակորդի նկատմամբ: Հաղթական թագավորները շատ հաճախ էին իրենց ոտքերը դնում թշնամու պարանոցին՝ ի նշան հաղթության, որտեղից էլ գալիս է վերոնշյալ հայտնի փոխաբերությունը:

Հարկ է նշել, որ այս սաղմոսն ամենաշատ հիշատակվողն է ամբողջ Նոր Կտակարանում: Այն կոչվում է մեսիական, որովհետև վերաբերում է վերջին ժամանակներին՝ մասնավորաբար Քրիստոսի երկրորդ գալստյանը: Սուրբգրային ուսումնասիրողները տարբեր վարկածներ են առաջ քաշում սաղմոսի թե՛ գրության ժամանակի, թե՛ հեղինակային պատկանելության շուրջ: Սաղմոսի նորկտակարանյան մեջբերումը և Հիսուսի կողմից դրա վերագրումը Դավթին հնարավորություն են տալիս փաստելու, որ այն պատկանում է վաղ շրջանին, մասնավորաբար վերաբերում է Դավիթ արքայի ժամանակաշրջանին (Ք. ա. մոտ 1010–970 թթ.): Ոմանք էլ այն վերագրում են Եղիազար Դամասկացուն (նշում են, թե նա այս ասել է Աբրահամի համար, երբ վերջինս հաղթանակ տարավ չորս թագավորների դեմ), ոմանք՝ Եզեկիա արքային, ոմանք էլ՝ Զորաբաբելին:

Ընդունված հիմնական տեսակետը, այդուհանդերձ, այն է, որ Դավիթն այստեղ դիմում է իր երկնավոր Տիրոջը՝ մեսիային: «Խոսքն այստեղ այնպիսի թագավորի մասին է, որը Դավթի Տերն է, նստած է Աստծու աջ կողմում, ծնված է արուսյակից առաջ և քահանա է՝ ըստ կարգի Մելքիսեդեկի. և ո՞ւմ կարելի է վերագրել այս հատկանիշները, եթե ոչ Հիսուս Քրիստոսին»,– կարդում ենք Չամչյանցի՝ «Մեկնություն Սաղմոսաց» գրքում: Ոմանք էլ պնդում են, որ սա միակ մեսիական սաղմոսն է, որ ուղղակիորեն է վերաբերում Հիսուս Քրիստոսին, այլ ոչ տիպաբանորեն:

Սաղմոսը հավանաբար գրվել է Իսրայելի շահած որևէ ճակատամարտից հետո, երբ աստվածային պատգամը նախանշել էր տրվելիք հաղթանակի մասին, և որը կարող է համապատասխանել Դավիթ արքայի՝ Երուսաղեմի նվաճմանը: Հետագայում այն կարող էր օգտագործվել այլ թագավորների կողմից արքայական տոների՝ հավանաբար թագադրումների, ինչպես նաև տարբեր ճակատամարտերից առաջ իրականացվող նախապատրաստական գործողությունների ժամանակ. սաղմոսը կհիշեցներ նրանց հաղթանակի վերաբերյալ Տիրոջ տրած խոստումը: Սաղմոսերգուն ստանում է հայտնություն, որ իր հետնորդը, որ նաև իր Տերն է, հնարավորություն կստանա Աստծուց՝ ազգերի վրա տիրապետություն հաստատելու և թագավորելու՝ ունենալով փառք ու պատիվ՝ որպես թագավորական քահանա:

Հին թագավորները՝ ներառյալ Իսրայելի արքաները, երբեմն իրենք էին քահանայական պարտականություններ կատարում, մի գործառույթ, որ Քրիստոս՝ իբրև Աստված և Մեսիա, նույնպես պիտի կատարի: Վաղ քրիստոնյաների համար սաղմոսը հետևյալ մեկնաբանությունն ուներ. հաստատվում է Քրիստոսի փառքը, և Եկեղեցին ապրում է Քրիստոսի զորությամբ ու առաջնորդությամբ: Մատթ. ԻԶ 64, Ղուկ. ԻԲ 69 և Մարկ. ԺԴ 62 համարներում Հիսուս հայտարարում է, որ Ինքը Մեսիան է, և որ Իրեն կտեսնեն Աստծո աջ կողմում՝ երկնքի ամպերի վրա: Աստծո աջ կողմում նստելը բարեհաճության և զորության նշան է: Դավիթը Սաղմ. ճԹ-ում, Պողոս առաքյալը Հռոմ. Ը 34-ում և Եբր. ԺԲ 2–ում հայտարարում են, որ Հիսուս Մեսիան է, Հիսուս Աստծո Որդին է, Հիսուս Աստված է: Համբարձված Հիսուս այլևս երկրի վրա չէ. նա մնալու է երկնքում մինչև Իր երկրորդ գալուստը:

Ըստ այսմ՝ կարող ենք ասել, որ համբարձման վերաբերյալ հրեական ավանդություններն ունեն ընդհանուր տարրեր, ինչպիսիք են ուսուցման շրջանը և վերջին զրույցը՝ նախքան երկինք համբարձվելը: Երկինք վերանալը սովորաբար դիտարկվում է վախճանաբանական համատեքստում, իսկ երկինք համբարձվածների մահվան մասին հստակ վկայություններ չկան:

Ենովքի և Եղիայի մասին աստվածաշնչյան պատմությունները հետագայում հիմք պիտի դառնային հրեական վախճանաբանական համատեքստ պարունակող այլ գրվածքների ստեղծման համար, որոնք ևս պիտի բովանդակեին համբարձման հետ կապված հետաքրքրական պատմություններ:

Մայիս սրկ. ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՂԱԶԱՐՅԱՆ

Ս. Էջմիածինը Հայրենական մեծ պատերազմի տարիներին

Երկրորդ աշխարհամարտի նախօրեին Հայ Եկեղեցին չուներ Գերագույն հովիվ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս, որի պարտականությունները Խորեն Ա Մուրադբեկյանի զոհվելուց հետո՝ 1938 թ. ապրիլից, ստանձնեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը:

Հայրենական մեծ պատերազմի նախաշեմին ԽՍՀՄ-ի իշխանությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնին թույլատրեցին գումարել Ազգային-եկեղեցական ժողով և ընտրել Ամենայն Հայոց Կաթողիկոս: Սակայն 1941 թ. ապրիլի 10—13-ը գումարված Ազգային-եկեղեցական ժողովը, սակավամարդ լինելու պատճառով, միայն կարողացավ ընտրել կաթողիկոսական ազգընտիր տեղապահ՝ ի դեմս Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի:

1941 թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Արդեն իսկ 1941 թ. հուլիսի 5-ին Հայ Եկեղեցու Գերագույն հոգևոր խորհուրդը ֆաշիստական Գերմանիայի դեմ պայքարի կոչով դիմեց աշխարհի հայ հավատացյալներին:

1941 թ. հուլիսի 30-ին հայ ժողովրդին ուղղած իր երկրորդ կոչով Հայ Եկեղեցու Գերագույն հոգևոր խորհուրդն առաջարկում էր երկրորդ համաշխարհային պատերազմում բոլոր միջոցներով աջակցել Խորհրդային Միությանը:

Պատերազմի սկսվելուն պես փակվեցին մի շարք հակակրոնական թերթեր և ամսագրեր: 1941 թ., որպես անվստահելի անձ, ձերբակալվեց և աքսորվեց Աստրախանի հայ քահանա Սարգիս Ասլանյանը: 1941 թ. հոկտեմբերի 8-ին ձերբակալվեց Քարվանսարայի (Իջևանի) ծխատեր հովիվը՝ Մեսրոպ քահանա Էդիլյանը, սակայն նկատի ունենալով նրա զառամյալ հասակը՝ Տեր Մեսրոպ քահանային 1942 թ. ազատեցին կալանքից:

1943 թ. մարտից Մայր Աթոռի նախաձեռնությամբ սկսվեց դրամահավաք՝ «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուներն ստեղծելու համար:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման գործին ջանադիր մասնակցեցին ԱՄՆ-ի, Հարավային Ամերիկայի, Կիպրոսի, Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եթովպիայի և այլ երկրների հայ համայնքները:

Մայր Աթոռի իրավունքների վերականգնումն սկսվեց 1944 թվականից: Հունվարից վերահրատարակվեց «Էջմիածին» ամսագիրը:

1944 թ. փետրվարի 25-ին հանդիսավոր պայմաններում խորհրդային տանկային զորամասին հանձնվեց 21 տանկից բաղկացած «Սասունցի Դավիթ» տանկային առաջին շարասյունը, իսկ նույն թվականի վերջին՝ նաև երկրորդ շարասյունը, որը բաղկացած էր 22 տանկից:

1944 թ. հունիսին ազգընտիր տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանն ստացավ ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ի. Ստալինի հեռագիրը, որում ասված էր. «Խնդրում եմ հաղորդել արտասահմանի հավատացյալ հայերին, որոնք դրամական միջոցներ են ներմուծել «Սասունցի Դավիթ» տանկային երկրորդ շարասյան կառուցման համար, իմ ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը»:

1945 թ. ապրիլի սկզբին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը կանչվեց Մոսկվա՝ Ի. Ստալինի մոտ: Մինչ այդ նա ապրիլի 5-ին Մոսկվայում նախապատրաստեց մի զեկուցագիր՝ Մայր Աթոռը վերականգնելու համար, որը պետք է տրվեր Ստալինին:

Դրա կետերն էին.

1. Վերականգնել Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանը՝ ուսուցման վեցամյա ժամկետով:

2. Սուրբ Էջմիածնին վերադարձնել նախկին հոգևոր ճեմարանի գրադարանը, որն այնքան անհրաժեշտ է նոր բացվելիք հոգևոր ճեմարանին (ներկայումս այդ գրադարանը գտնվում է Մատենադարանում):

3. Թույլ տալ Ս. Էջմիածնին ունենալ իր տպարանը՝ հոգևոր ճեմարանի դասագրքերը, եկեղեցական գրքերը, կաթողիկոսի կոնդակները, «Էջմիածին» ամսագիրը և եկեղեցական օրացույցը տպագրելու համար:

4. Թույլ տալ «Էջմիածին» ամսագրի հատուկ բաժնում տպագրել գիտահետազոտական հոդվածներ հայագիտության բնագավառից, որովհետև առանց դրա՝ ամսագիրն արտասահմանում հաջողություն չի ունենա և չի կարող իրագործել իր հիմնական դերը, այն է՝ ամրապնդել արտասահմանյան հայերի կապը Խորհրդային Հայաստանի հետ:

5. Որոշել Ս. Էջմիածնի վանքի սահմանները՝ տալով նրան իսկական վանքի կերպարանք: Ներկայումս վանքապատկան շենքերն զբաղեցնում են զորամասերը և խորհրդային-կուսակցական հիմնարկությունների աշխատողները:

6. Ս. Էջմիածնին վերադարձնել Հռիփսիմե, Գայանե և Խոր վիրապ վանքերը:

7. Ս. Էջմիածնին թույլ տալ նորից կառուցել «Զվարթնոց» տաճարը՝ ըստ ճարտարապետ Թորոս Թորամանյանի նախագծի:

8. Թույլ տալ կաթողիկոսի միջնորդությամբ, անհրաժեշտության դեպքում, Խորհրդային Հայաստան (Ս. Էջմիածին) ժամանել արտասահմանի հոգևորականների՝ եպիսկոպոս ձեռնադրելու համար, ինչպես նաև եկեղեցական գործերով արտասահման մեկնել Ս. Էջմիածնի նշանակած թեմակալներին և Ս. Էջմիածնի պատգամավորներին:

9. Թույլ տալ Ս. Էջմիածնին առաջիկա մեռոնօրհնության կապակցությամբ 1946 թվականին արտասահմանից եպիսկոպոսների և թեմակալների հրավիրել և վերջիններիս միջոցով՝ որպես ուխտավորների, կազմակերպել հայ անվանի հարուստների ժամանումը՝ նպատակ ունենալով նրանցից ստանալու դրամական խոշոր միջոցներ՝ Ս. Էջմիածնի և Խորհրդային Հայաստանի շինարարական կարիքների համար:

10. Թույլ տալ Պետբանկի երևանյան բաժանմունքում բացել Ս. Էջմիածնի օտարերկրյա արժութային հստակ հաշիվ և այստեղ կենտրոնացնել Ս. Էջմիածնի անունով արտասահմանյան թեմերից ստացվող դրամական միջոցները:

11. Թույլ տալ Գերագույն պատրիարքին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, վանքի և Վեհափառի կարիքների համար արտասահմանից ստանալ ավտոմեքենաներ, գրամեքենաներ, թուղթ և այլն, ինչպես նաև ծանրոցներ՝ Էջմիածնի միաբանության կարիքների համար:

1945 թ. ապրիլի 19-ին Կրեմլում տեղի ունեցավ հանդիպում Ի. Ստալինի և Հայ Եկեղեցու կաթողիկոսական ազգընտիր տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի միջև: Ստալինը բարձր գնահատեց ազգընտիր տեղապահի հայրենասիրական գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի ընթացքում: Խորհրդային պետության ղեկավարը համաձայնեց բավարարել Գևորգ սրբազանի դիմումում ներկայացված բոլոր կետերը՝ բացի էջմիածնապատկան կալվածքների հարցից, քանի որ նշված նախկին վանքապատկան հողատարածությունները գտնվում էին կոլտնտեսության տրամադրության տակ:

Հանդիպման ժամանակ խոսք բացվեց հայ ժողովրդի կարիքների, ինչպես նաև նրա արևմտահայոց տարածքների և դրա հետ միասին՝ Խորհրդային Հայաստան սփյուռքահայերի հայրենադարձության մասին. փաստորեն օրակարգի հարց էր դառնում Հայ դատը:

1945 թ. մայիսին ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Մայիսի 10-ին այդ առթիվ Հայաստանի եկեղեցիներում Պատարագ մատուցվեց:

Արևմտահայոց տարածքների հարցը Ի. Ստալինը բարձրացրել էր 1945 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ին տեղի ունեցած Բեռլինի (Պոտսդամի) վեհաժողովում:

1945 թ. մարտի 15-ին ԽՍՀՄ-ի կառավարությունը չեղյալ հայտարարեց «Բարեկամության և չեզոքության» խորհրդա-թուրքական պայմանագիրը, որը կնքվել էր 1925 թ., և Ստալինի կենդանության ժամանակ ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև խաղաղության նոր պայմանագիր այդպես էլ չկնքվեց:

Հայ դատի մասին տեղեկացվեցին Սփյուռքի հայերը, որոնք Հայ դատի դրական լուծման պահանջներով հարյուրավոր նամակներ էին հղում Վեհափառ Հայրապետին:

1945 թ. հունիսի 16—17-ին Ս. Էջմիածնում անցկացվեց Ազգային-եկեղեցական ժողով, որտեղ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը, որը խորհրդային իշխանությունների կողմից ստացավ «Կովկասի պաշտպանության համար» մեդալ:

1945 թ. հոկտեմբերի 25-ին Գևորգ Զ-ն կոնդակով դիմեց ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին՝ հայկական հողերը Թուրքիայից հետ ստանալու պահանջով:



Հայերի հայրենադարձությունը 1946 թ. կեսին ստացավ կազմակերպված բնույթ: Անդրկովկասի տարբեր քաղաքներում ստեղծվեցին սփյուռքահայերի ընդունման և տեղաբաշխման կետեր: Սփյուռքահայերը գալիս էին, տեղավորվում Թուրքիայի սահմանին մոտ գտնվող քաղաքներում և գյուղերում, որպեսզի Հայ դատի խնդրի լուծումից հետո տեղափոխվեն Արևմտյան Հայաստան:

1947 թ. ապրիլի 20-ին Գևորգ Զ-ն հրապարակեց «Հայկական հարցի լուծման» ընդարձակ մի կոնդակ, որում պաշտպանում էր Հայ դատը՝ անվանելով այն արդարացի:

Հայաստան ներգաղթողների մեջ էին նաև Սփյուռքից եկած հոգևորականներ, որոնք բացեիբաց իրենց դժգոհությունն էին հայտնում Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակից, խոսքի ազատության բացակայությունից, պետության կողմից շարունակվող հակակրոնական պայքարից, ինչպես նաև ներգաղթած հայերի սոցիալական ծանր վիճակից:

Շուտով խորհրդային իշխանությունները ներգաղթած հոգևորականներից մի քանիսին ձերբակալեցին և աքսորեցին Ռուսաստանի հեռավոր վայրեր: 1945 թ. ձերբակալվեց և տասը տարով աքսորվեց Հարություն քահանա Մադոյանը, 1948 թ. ձերբակալվեցին Պարսկաստանից ներգաղթած Վարդան քահանա Տեր-Վարդանյանը, ինչպես նաև Քերոբ քահանա Շահբազյանը, Կարապետ քահանա Շահբազյանը, Խաչատուր քահանա Խաչատրյանը, Խաչիկ քահանա Կիրակոսյանը, Թովմաս քահանա Տերտերյանը և ուրիշներ:

1948 թ. Գևորգ Զ Չորեքչյանը դիմում հղեց ԽՍՀՄ-ի Մինիստրների խորհրդին կից կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ի. Պոլյանսկուն՝ խնդրելով օժանդակություն ցուցաբերել հետևյալ հարցերում. 1. Էջմիածնի Մայր տաճարի արմատական վերակառուցման և վերականգնման գործում, 2. Էջմիածնին վերադարձնել նրան պատկանող շինությունները, 3. թույլատրել նոր եկեղեցիներ կառուցել, 4. լուծել կաթողիկոսի տեղակալի նշանակման հարցը մինչև 1949 թ. աշուն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանքերը, եկեղեցիներն ու շենքերը շարունակում էին մնալ խորհրդային իշխանությունների, խորհրդային բանակի զորամասերի և սահմանապահների տրամադրության տակ: Կաթողիկոսի բոլոր դիմումները մնացին անպատասխան:

Ստեփան ՍՏԵՓԱՆՅԱՆ, պ. գ. դ.

Խրիմյան Հայրիկ և Րաֆֆի՝ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրաները

Խրիմյանի Հայրիկի և Րաֆֆու կյանքն անմնացորդ նվիրում եղավ իրենց տարաբախտ հայրենիքին: Ազգային-ազատագրական պայքարի այս երկու նվիրյալ ջահակիրները վավերագրեցին իրենց հոգին ու միտքը մշտապես համակած մտորումները հարազատ ժողովրդի բարօրության ապահովման համար:

Համազգային իղձերի և պայքարի ազդարար ու խոսնակ լինելուց առաջ՝ ազգանվեր հերոս է Րաֆֆին: Նրա գործերը ջերմ հայրենասիրություն ու ազատաբաղձություն են ճառագում. դրանք ոչ միայն ազգային-ազատագրական ոգորումների գեղարվեստական վավերագրություն են, այլև հոգևոր արժեքներով սերունդ վերադաստիարակող և նոր՝ ազատ ու ինքնիշխան հայրենիք տանող լուսավոր ճանապարհ: Րաֆֆին իր գաղափարներով ու կենսափիլիսոփայությամբ հավաստեց, որ արդար, ճշմարիտ, անկեղծ և իսկական հայրենասիրությունն անմահ է:

Ազգի ցավերով տանջվող գործիչները ծնվում են ճիշտ ժամանակին, հենց ժամանակն էլ նրանց դարձնում է ազգային կյանքի առաջնորդ: Նրանք ծնվում են, որ կյանքի կոչեն ազգի դարավոր իղձերը, դառնան իրենց հերոսածին ազգի նոր, բարօր կյանքի ճարտարապետը: Եվ նրանց նվիրական անունները մշտապես հիշվում են, նրանց գաղափարները մայրական կաթի հետ ներարկվում են նորածին մանուկներին, դառնում մշտագո, անժամանցելի արժեքներ:

Րաֆֆին՝ որպես խորապես ազգային գրող, իր գործը կատարեց փառահեղ. նա գտավ, համազգային լավագույն հատկանիշներով ու բնավորության գծերով օժտեց և վերակերտեց պետական, ռազմական, հասարակական, եկեղեցական, մշակութային, միաժամանակ նաև իսկապես ինքնատիպ, օրինակելի հայրենասեր նոր հերոսների ու հերոսուհիների: Նա Սամվելի, Աշխենի, Համազասպուհու, Արշակի, Փառանձեմի, Ներսես Մեծի, Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, Մուշեղ Մամիկոնյանի, Դավիթ Բեկի, Ստեփանոսի, Թորոսի, Վարդանի, Լալայի, Ֆարհատի, Կարոյի, Ասլանի ու ժողովրդի ծոցից ելած մյուս հերոս-հերոսուհիների հետ մտավ իր հարազատ ժողովրդի սրտի ու գիտակցության մեջ, դարձավ ճշմարիտ ու անմնացորդ սիրով Հայաստանին նվիրված հայորդիների հոգևոր ուսուցիչն ու դաստիարակը: Իսկ լավ ուսուցչի ամենազորեղ գործիքը հենց անձնական օրինակն է: Ուստի Րաֆֆին դառնում է հայ ազգային-ազատագրական շարժումների ոչ միայն տեսաբան-դրոշակակիրը, այլև անմիջական մասնակիցը: Նա իր պատմավեպերով հայրենասիրական պոռթկում էր արթնացնում ազատատենչ հոգիներում, զինված պայքարի կոչում երիտասարդ սերնդին՝ վերջնանպատակ ունենալով ազատ ու անկախ, միասնական Հայաստանի վերակերտումը և տիրող անարդար կարգերի խորտակումը: ➥ էջ 8

Իսահակ վրդ. Պողոսյան. «Հայոց ինքնության արեգակը»

(վիպակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին)

Լեռների զավակը

«Ընդ առաւօտս լուիցես
Ձայնի իմում, տէր.
Թագաւոր իմ և աստուած իմ»
(Շարակնոց):

Գյուղում ասում էին. «Այս երեխան մեծ մարդ է դառնալու, քանի որ աչքերը չեն խաբում»:

Եվ, իրապես, նրա աչքերում կարծես հանդիպում էին աստվածապարգև խաղաղ երկինքն ու բանականը փնտրող, անհանգիստ հոգին: Այն ժամանակ, երբ հասակակիցները վազվզում էին, զանազան խաղեր խաղում, նա նստում էր լեռների պռնկին ու քարերի վրա և երկար, անթարթ հայացքով նայում թռչունների ճախրին, կենդանիների վարք ու բարքին:

— Ինչո՞ւ ես այդպես նայում,— հաճախ անհանգստանալով՝ հարցնում էր մայրը՝ Աղավնին:

— Իսկ դուք չե՞ք տեսնում կամ լսում,— պատասխանում էր նա:— Թռչուններն ու կենդանիները նույնպես ապրում, անհանգստանում ու զրուցում են միմյանց հետ, ինչպես որ մարդիկ: Ես ուզում եմ հասկանալ նրանց լեզուն:

— Այդ դեպքում դու պետք է նախ ուսանես, լավ կրթություն ստանաս, որպեսզի կարողանաս բացահայտել բնության հրաշքները,— խրատում և հուսադրում էր հայրը՝ Վարդանը:

— Ես զինվորական եմ դառնալու,— մեծերին բնորոշ կերպով արձագանքում էր Մեսրոպը:

— Շատ էլ լավ ես անելու,— դարձյալ արձագանքում էր հայրը ժպիտով,— որովհետև զինվորություն չանցած մարդը նման է բարակ պատերի վրա կանգնած ապարանքի, որի ամեն կողմից քամի է սուրում, և դեռ հայտնի չէ, թե որ պահին փուլ կգա տանիքը: Կարող ես դառնալ և՛ զինվորական, և՛ գիտուն մարդ համաժամանակ:

— Այո՛, հայրիկ, ես չեմ վախենում դժվարություններից: Դրանք ինձ համար ավելի շատ առաջամուղ հենարաններ են՝ նպատակադրումներին ընդառաջ:

— Այդպես էլ պետք է,— վերստին զավակին ոգևորում էր հայրը,— որովհետև մարդն արժանիքի ու առավելության հասնում է ոչ միայն շնորհի ու հմտության, այլև եռանդի, համբերության, համարձակության և ինքնավարության միջոցով:

Մի անգամ հայրը տուն բերեց հին ձեռագրի ինչ-որ պատառիկ: Մեսրոպը մատներով զգուշորեն շոշափեց տառերն ու բացականչեց.

— Տառերը փակ դռներ են:

Ընտանիքի անդամները կարկամեցին:

— Տառերը փակ դռներ են,— դարձյալ բացականչեց պատանի Մեսրոպը:— Ես մի օր գտնելու եմ այն բանալին, որը կբացի դրանք:

— Դու իսկապես որ հասարակ մահկանացու չես: Դեռ շատ բանալիներ ու դռներ կգտնես ու կբացես՝ անմահացնելով քո նախնիների հիշատակը,— գորովանքով նրան դարձան ծնողները:

Գյուղով անցնող ճամփորդներից շատերը նրան գտնում էին լռության մեջ, բայց այդ լռությունը պարզ ու սովորական չէր, այլ ընդարձակ, իմաստալից ու խորհրդավոր, ինչպես ամառային պարզկա երկինքը, երբ արևի շողերը մեղմ նազում են եթերի կապույտի վրա:

— Դու հազվագյուտ շնորհով երեխա ես,— հաստատում էր հունարենի և ասորերենի ընտիր գաղտնիքները փոխանցող տարեց ուսուցիչը՝ Աբրահամը:— Ամենուր ցանկանում ես հասկանալ իմաստը, հասնել արմատին: Բայց պետք է իմանաս, որ արմատը, որպես կանոն, խորն է լինում ու քարքարոտ:

Մեսրոպը ժպտագին ու խոնարհ պատասխանում էր.

— Ես ուզում եմ խոսել մարդկանց սրտերի հետ՝ նրանց լեզուներով:

Աբրահամը նրան բացատրում էր, որ տառերը ևս պարզապես գծեր չեն, այլ ապրող կերպարներ: Մեսրոպն ինքն էլ էր զգում դա, քանի որ ուշիմ երեխա էր: Շուտ ընկալում էր գիտելիքը, զանազան հարցեր տալիս և բավականությամբ յուրացնում դասերը:

— Աշխարհում ամեն շարժ, ամեն մի գիծ իր իմաստն ունի,— ուսուցանում էր պարսկերենի և վրացերենի ուսուցիչը՝ Արտույտը՝ խոհեմ և իմաստուն մի մարդ:

— Այդ դեպքում ինչպե՞ս է, որ մենք չունենք մեր գծերը,— հարցնում է տակավին երեխա Մեսրոպը:

Աբրահամն ու Արտույտը հաճախ էին լուռ ու անթաքույց զարմանքով հետևում նրան, ինչպես ծառի, որը հետագայում խոր արմատներով նստելու է պարարտ հողի մեջ:

Այսպես անցան տարիներ: Մեսրոպն արդեն տիրապետում էր մի շարք լեզուների ու գիտությունների և սպասավորում էր թագավորի արքունիքում:

Այն ժամանակ Խոսրով Դ Արշակունին Հայոց պետական միասնությունը վերականգնելու ամբաստանությամբ դեռ աքսորված ու բանտարկված չէր Անհուշ բերդում և ամուսնացած լինելով Պարսից Շապուհ Գ-ի քույր Զրվանդուխտի հետ՝ տակավին գլխավորում էր երկիրը: Նա էր, որ անձնական բարեկամություն հաստատեց Արկադի կայսեր հետ և առանց Շապուհի կարծիքը հաշվի առնելու՝ Ասպուրակեսի մահից հետո հաջորդ նշանակեց Սահակին, որը, հար և նման իր առաքինի նախորդներին, շուրջը հավաքեց վաթսուն երևելի աշակերտների և ամենուր նրանց հետ էր շրջում: Նա բանտարկվեց Մեծ Հայքի՝ Սասանյան Պարսկաստանի ու Հռոմեական կայսրության միջև բաժանումից շուրջ մեկ տարի անց, երբ Արկադին հրաժարվեց որևէ օժանդակություն ցուցաբերել Հայքին, իսկ հայ մեծամեծների մի մասն անցավ պարսիկների, մյուս մասը՝ հռոմեացիների կողմը: Այդ ժամանակ միայն եղբայր Շավարշը, որը զոհվեց կռվի ընթացքում Ամատունի կրտսերի՝ Մանվելի հետ, ու Պարգև Ամատունին հանդգնեցին յոթ հարյուր մարդկանցով ընդդիմանալ Հայաստան ուղարկված Շապուհի որդի Արտաշիրի զորքերին, բայց հաջողություն չունեցան: Նա ազատվեց ու կրկին գահ բարձրացավ շատ ավելի ուշ՝ Սահակ Պարթև կաթողիկոսի միջնորդությամբ, իր եղբոր՝ Վռամշապուհ արքայի մահից հետո, երբ արդեն հիվանդ ու տարիքոտ էր:

Երբ ժամանակը հասավ, շատ պատանիների նման Մեսրոպն էլ մեկնեց զինվորական ծառայության: Այստեղ նա զգաց, թե որքան բարձիթողի է մարդու լեզուն, երբ հարաբերվում է ուժի հետ, որքան արագ է մթագնում մարդու ներսը, երբ խոսում է հնազանդությունը, և բացակայում է խոսքը: «Խոսքը մարդու վերջին ամրոցն է,— մտածեց նա,— իսկ ինքնուրույն խոսքը՝ աննվաճ ու անպարտելի բերդ: Ժողովուրդը, առանց իր ուրույն խոսքի, նման է զինվորի՝ առանց հանդերձանքի, առանց սրի, առանց երգի ու հոգու»:

Ծառայությունից վերադառնալով՝ ուղղվեց վանքերը՝ հաճախ ոտքով կտրելով երկար, քարքարոտ արահետներ: Եվ մի անգամ՝ արևամուտի խունացած շղարշի ժամանակ, երբ լեռների սքողված կատարներին լուսատուի վերջին ոսկե շողերն էին փռվել, հասավ հին ու ժայռափոր վանքերից մեկը:

Սահակ հայրապետը՝ հոգնաբեկ, բայց խաղաղ լուսավորությամբ, նստած էր վանքի բակում: Երեկոյի անդորրության մեջ, ուր մեղմ քամին դրախտի բալասան էր թվում, հանկարծ լսվեցին ինչ-որ մեկի ոտնաձայները: Հայրապետը վեր նայեց ու նշմարեց քարակապ մութ կիսաշրջանից ներս եկող երիտասարդին՝ աչքերը խոր, բայց աշխույժ ու լուսավոր, այտերը՝ ճանապարհի հոգնությունից կարմրատակած: Երիտասարդը խոնարհ ողջունեց նրան, որին հետևեցին հայրապետի խորազնին հայացքն ու հարցախույզը:

— Որդի՛, դու որտեղի՞ց ես,— բազմանշանակ հարցրեց հայրապետը:

— Ես Մեսրոպն եմ՝ Հացեկաց գյուղից, Վարդանի և Աղավնու որդին և Տարոնո լեռների հարազատ զավակը,— հայրապետի միտքը կռահելով՝ պատասխանեց երիտասարդը:

Հայրապետը, նրա անկաշկանդ խոսքերից առանձնակի թեթևություն զգալով, երեսին ժպիտ խաղացրեց:

— Ասա՛ ինձ, ի՞նչ ես փնտրում այս հարկի տակ:

— Ասում են՝ Աստծու խոսքը հասանելի պիտ լինի բոլորին: Ես այդ խոսքի հետևից եմ եկել:

— Այո՛, լա՛վ ճանապարհ ես բռնել: Որքան հասկացա, ծառայել ես:

— Այո՛, նաև արքունիքում:

— Որքա՞ն ժամանակ է, որ այս ճանապարհին ես:

— Արդեն տարի ու մի քանի ամիս:

— Լեզուն՞ը:

— Հանգիստ կարդում և գրում եմ մեր հարևան ժողովուրդների լեզուներով: Բայց, հայրապե՛տ,— օգտվելով Սահակի բարյացակամությունից՝ շարունակեց նա,— ես կարծում եմ, որ մեր ժողովուրդն իր մայրենի ձայնը պիտի ունենա և Աստծու հետ դրանով խոսի:

Հայրապետը բազմախորհուրդ լռեց...

Մեսրոպը միանգամից չհասկացավ նրա լռության պատճառը:

— Խոսի՛ր, որդի՛, խոսի՛ր,— խաղաղությամբ հորդորեց հայրապետը,— ես հենց քո խոսքի կարոտությունն ունեմ:

— Այլապես մի օր կզրկվի ամեն ինչից ու կդադարի գոյություն ունենալ,— խոսքը փակեց Մեսրոպը:

— Մեսրո՛պ, որդի՛, դու կարծես իմ վաղեմի որոնումների պատասխանը լինես, որ այսքան ժամանակ թևածել են իմ հոգում: Քո խոհը ժամանակից առաջ է անցնում՝ անաղմուկ ծնունդ տալով զգացմունքների ու մտքերի, որոնք հետո են իրականանալու,— վրա բերեց հայրապետը՝ հուզված:— Եթե հաջողություն ունենաս, քո բերածը ոչ միայն խոսք կլինի, ոչ միայն լույս՝ մեր որոնումների ճանապարհին, այլև փրկություն: Ես իմ բոլոր միջոցներով կատարեմ քեզ: Կարո՞ղ ես գլուխ բերել այդ գործը...

Մեսրոպը զգացվելով՝ շիկնեց:

— Եթե Տերը կամենա...

Այդ պահին կարծես երկինքն ավելի մոտեցավ նրանց, ու այնպես թվաց, թե վանքի վրա իջնող մթնշաղը մի պահ կանգ առավ՝ փոխակերպվելով լուռ ու լուսավոր աստղաթափի...

Շարունակելի

Քրիստոնեական մարդասիրությունը «Մայրենիի խելացի ընթերցարան»-ներում

Քրիստոնեական կրոնն աչքի է ընկնում իր շեշտված մարդասիրությամբ, որն ուղղված է ոչ միայն այդ կրոնը պաշտող ազգին, այլև համայն մարդկությանը: Քրիստոնեական կրոնի տասը պատվիրանները դրա վառ ապացույցն են:

Քրիստոնեական մարդասիրությունն առկա է նաև հայ պատմիչների մատյաններում, հայ պոեզիայում և արձակում, մեր հին ու նոր վիպերգերում: Այդ գրքերն ստեղծվել են կարդալու համար, դրանք դասավանդվել են հայկական դպրոցներում, կրթել սերունդների, իսկ իմաստուն ուսուցիչներն ու մանկավարժները կազմել ու հրատարակել են նաև քրեստոմատիա-ընթերցարաններ:

Հայ աշակերտների համար իսկական նվեր է 5-րդ ու 6-րդ դասարանների «Մայրենիի խելացի ընթերցարան»-ը, որոնց հեղինակները երկու հմուտ վաստակաշատ մանկավարժներ են՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը և ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի «Կրթության կառավարում» բաժնի դասախոս Թամարա Թովմասյանը:

Քաջածանոթ լինելով այդ խելացի ընթերցարաններին՝ եզրահանգել եմ, որ դրանք հետաքրքրություն կառաջացնեն դեպի ընթերցանությունը, կնպաստեն աշակերտների մտավոր զարգացմանը, կդաստիարակեն նրանց այնքան կարևոր մարդասիրության ոգով:

Հիանալի է, որ երկու ընթերցարաններն էլ սկսվում են Մեսրոպ Մաշտոցին նվիրված գրական գործերով: Սա հնարավորություն կտա ուսուցիչներին պատմելու Հայ եկեղեցու կողմից սրբացված երկու հոգևորականների՝ Մեսրոպ Մաշտոց վարդապետի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Սահակ Պարթևի կյանքի ու գործի մասին:

Հինգերորդ դասարանի ընթերցարանում զետեղված է Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթից մի հատված, որն իմաստուն գրողը հրաշալի ձևով մշակել է՝ ըստ ժողովրդական «Փեշակը ոսկի ա» հեքիաթի՝ նրանում անանուն թագավորի փոխարեն գլխավոր հերոս դարձնելով Արցախի և Ուտիքի հայ թագավոր Վաչագան Բարեպաշտին, որը եղել է նվիրյալ քրիստոնյա, բացել դպրոցներ, կառուցել եկեղեցիներ ու վանքեր, պայքարել հեթանոսների ու աղանդավորների դեմ, երկրում հաստատել կարգուկանոն, բարեկեցություն:

Հետաքրքիր է Ս. Զորյանի «Զրույց լավաշի մասին» գործը, որը ներկայացնում է՝ Հայկյան Արամն ինչպես է հաղթում հզոր Ասորեստանի թագավորին՝ իր հնարագիտությամբ երկաթե լանջապանակի տակ թաքցնելով մի լավաշ: Լավաշը հայ արքային ուժ է տալիս ու փրկում քաղցից ու մեռնելու վտանգից:

Աշակերտներին ուսուցիչը կարող է բացատրել, որ լավաշն այդ անունով թխվում ու վաճառվում է հիմա աշխարհի բազմաթիվ երկրներում՝ որպես հայկական հաց: Լավաշը և ցորենը համարվում են Հիսուս Քրիստոսի խորհրդանիշներից: Եվ գիտական աշխարհն ընդունում է, որ ցորենի հայրենիքը եղել է Հայաստանը, ու այնտեղից տարածվել է աշխարհով մեկ:

Աշակերտներին քրիստոնեական մարդասիրության ոգով դաստիարակելու հիանալի նմուշ է Վահրամ Ալազանի հուշապատումից մի հատված՝ նվիրված հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացուն: Նարեկացին ոչ միայն Հայ Առաքելական Եկեղեցու սրբերից է. Վատիկանը նրան հռչակել է նաև համաքրիստոնեական աշխարհի սուրբ, և նրա արձանը կանգնեցվեց Վատիկանում, ինչպես որ 2001-ին Վատիկանում կանգնեցվել է Գրիգոր Լուսավորչի՝ սպիտակ մարմարից կերտված փառահեղ արձանը, որի ներքևում հայերեն ու լատիներեն նշված է, որ աշխարհի առաջին քրիստոնյա կաթողիկոսն է:

Ահա թե որքան են պաշտել Գրիգոր Նարեկացուն՝ ըստ Վ. Ալազանի մանկական հուշերի. «Ծնկաչոք ներս սողոսկող ամեն մի ուխտավոր նախ համբուրում էր մեծ բանաստեղծի գերեզմանաքարը և ապա գերեզմանաքարի վրա դրված սինու մեջ գցում ինչ-որ թանկագին բան, որ ուներ իր մոտ կամ ինչ որ խոստացել էր իր սրբին» (էջ 99):

5-րդ դասարանի ընթերցարանում զետեղված է Մ. Գալշոյանի «Ձայն ամենայն Հայոց» պատմվածքը՝ նվիրված հանճարեղ Կոմիտաս Վարդապետին: Կոմիտասն աշխարհին ապացուցեց հայ եկեղեցական երաժշտության բացառիկ բնույթը: Նա գիտեր, թե Մեծ Հայքի ամեն մի նահանգում հայ մարդն ինչպես է երգել, և դրանք Մ. Աբեղյանի հետ հավաքագրեց «Հազար ու մի խաղ» ժողովածուում, որը լույս տեսավ Վաղարշապատում 1905-ին. «Եվ մեկիկ-մեկիկ ձայնել տվավ ամենքին, ամեն մեկի շնչից գուշակեց նրա աշխարհն ու լսեց այդ աշխարհի շշուկները: ➥ էջ 8

Խրիմյան Հայրիկ և Ռաֆֆի՝ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրաները

↩ էջ 6

Ռաֆֆին զենքն ուղղում է ոչ միայն օտարազգի բռնակալների ու շահագործողների, այլև ազգակից հարստահարիչների՝ արյունածուծ տզրուկների դեմ: Այս դիտանկյունից նրա ազատասիրական կոչը համամարդկային մարտակոչ է դառնում: Հենց դա է ճշմարիտ մշակութային գործչի, ազգասեր ու մարդասեր գրողի իսկական կոչումը: Բռնակալն ամենուր և միշտ նույն անունն ունի, ամենուր և միշտ նույն գործն է անում՝ կեղեքում, ճնշում, սուտ խոստում ու կեղծ երդում է տալիս, թալանում, զրկում, ոտնատակ տալիս ամեն սրբություն, ուզում է, որ միշտ իր վրա ծագի արեգակը:

Ի տարբերություն սրանց՝ Ռաֆֆին ու մյուս ազգասեր գործիչները Խրիմյանի պես երազում էին այն օրը, «երբ մեր գյուղացին հանգիստ վայելե» իր «հայրենյաց ագարակին արդյունքը», մեր «երկրում տիրե արդարություն և խաղաղություն», իսկ մեր ձորերում, ուր լռությունն սպանում է ավազակների հրազենը, շոգեքարշի սուլոց լսվի, «ունենանք հեռագիր, դպրոցներ, համալսարան»:

Հայն իր հայրենիքում զրկված էր մարդկային տարրական իրավունքներից ու ազատությունից: Դա իրավազրկության ծայրահեղ աստիճանն էր. «Մեր աշխարհին մեջ լացն ևս ազատություն չունի»: Ուստի և Հայոց Հայրիկը տենչում էր. «Պիտի դառնամ հայրենիքս, լեռ, բերանս հողին տամ, թուղթ ու գրիչ սիրեմ. վասն զի փորձառությամբ հասկցա, որ այս աշխարհին մեջ մարդ մեծ պաշտոնի գլուխ անցնելով կարող չէ այնպես մեծագործել, ինչպես յուր և ազգին փափագն է»:

Ըստ Խրիմյան Հայրիկի՝ մարդկային հասարակությունը ոչ բանական կառուցվածք ունի, «մարդիկ հավասար կը ծնին, անհավասար կապրին և հավասար կը մեռնին»: Խրիմյանի՝ ներհասարակական կյանքին վերաբերող բազմաթիվ հետաքրքիր դիտարկումներից մեկն է դա, որով նա մերժում է սպասողական, համբերող, հայեցողական, կրավորական դիրքորոշումը. «Մեծապես և առավել կը սխալին ժողովուրդներ ունայնամիտ հույսերով, երբ իրենց բաժնին և ուժին չափով հառաջդիմության ճանապարհ չեն բանար, այլ հեղգամիտ լինելով ամենայն ինչ կառավարութենեն կը սպասեն.... գիտցիր այսուհետև թե՝ դու ինքդ ես միայն քեզ օգնական»: Խրիմյան Հայրիկի համոզմամբ՝ մանկամտություն կամ միամտություն է արտաքին օգնության սպասելը կամ ուրիշների վրա հույս դնելը: Դա հավասար է ինքնասպանության: «Այն ազգ և աշխարհք, որ Հայ չէ, մեզ հետ չի լար, այլ մեզ չէ պետք օտարին լաց, բավական է, որ թե՛ տարաշխարհիկ գաղթական հայեր և թե՛ Բյուզանդիոնի պանդուխտ հայեր հիշեն մեր հայրենյաց չարչարյալ որդիքներ և լան: Ես գիտեմ, և դու գիտես, թե սոսկ լալով ու ողբով եթե շաղախենք մեր հայրենյաց հող, հայրենիք չշինվիր»: Հայոց Հայրիկն անհրաժեշտ էր համարում ժողովրդի մեջ վառ պահել հավատը, հորդորում էր չհուսահատվել՝ սպասելով, որ «օր մի ևս երկինք այդ կենդանարար ցող Հայոց դաշտերուն վերա կը ցողե, դու կտեսնես, թե ինչպես Հայոց աշխարհն ևս կը վերածնի հրաշյուք: Միայն թե մենք աննկուն արիությամբ գործենք, և Աստված մեր օգնականն է»:

Դժբախտաբար, միջազգային հանրության աչքին հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի իրավացիությունը և ազատ, անկախ ու միացյալ հայրենիքի վերակերտման սրբազան անհրաժեշտությունն արժեք չունեն, և մեծաթիվ մարդկային ու նյութական կորուստների դիմաց մեր տարած իրական հաղթանակները մեծամասամբ լոկ բարոյական են ընկալվել: Միջազգային հանրությունը միշտ էլ անհաղորդ, կույր ու խուլ է մնում մեր ցավերին, մեր պահանջներին ու մեր հեղված արդար արյանը: Դարեր են անցել, բայց աշխարհի քաղաքական բեմահարթակին միայն գլխավոր դերակատարներն են փոխվում, ուրիշ ոչինչ չի փոխվում՝ հօգուտ մարդկայնության, պատմական արդարության վերականգնման և հատուցման: Մենք, սակայն, լիահույս ենք, որ անհավասար պայքարում հայ ժողովուրդն իսկապես կհաղթի, կիրականանա մեր նվիրական իղձը՝ տեսնել հայ ժողովրդին միասնական ու միակամ, հավաքված հայրենի ակութի բոլորքը: Դրա համար անհրաժեշտ է մեկտեղել ազգի ուժերը, համախմբվել հայրենիքի ազատագրման, ամբողջացման, զորեղացման սրբազան նպատակի շուրջ, իրականացնել Խրիմյան Հայրիկի նախաձեռնած ազգահավաքման, հայրենադարձության կոչ-պատգամը. «Արիք, պանդուխտ և տարագիր հայք, ելեք և փութացարուք հայրենի աշխարհ ձեր.... արիք և շինեցեք զավերակն և բնակեցեք ի նոսա, աճեցեք և բազմացարուք և լցեք զերկիրն, երկիրն զոր ետ Տեր հարց ձերոցն»:

Ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում Խրիմյան Հայրիկն իր ազգանպաստ գործունեության դժվարին ճանապարհին առաջնորդվել է մի մշտարթուն գաղափարով՝ սրբազան հայրենիքն ազատագրել բռնատիրության ճիրաններից, աշխարհասփյուռ հայությանը համախմբել մայր հայրենիքում, ազգափրկիչ ու հայրենանվեր բոլոր ուժերը կենտրոնացնել երկրում և ստեղծել այնպիսի պայմաններ, որ հայն այլևս չհեռանա իր դրախտային բնօրրանից: Խրիմյանին տանջում էր այն իրողությունը, որ աշխատավոր հայ գեղջուկը, արհեստավորն ու վաճառականը հարկադրված թողնում էին իրենց սրբազան հողը ու գնում բախտ որոնելու օտար երկինքների տակ: Գաղթավայրը, որքան էլ բարգավաճ ու խոստումնալից, պանդուխտ հայի համար դրախտավայր չէր կարող լինել, քանի որ հայրենիքը մայրն է, իսկ օտարությունը՝ խորթ մայրը:

Ահա ինչու Հայոց Հայրիկը ջանք ու եռանդ չէր խնայում՝ բուն երկրում՝ Արևմտյան Հայաստանում, գործադրելու բարենորոգումներ, բացելու դպրոցներ ու վարժապետանոցներ, հիմնելու մամուլ ու տպագրություն, լուծելու հայրենի բնաշխարհի բազում խնդիրներ, դարմանելու գավառահայության հոգսերը: Հայոց Հայրիկի մեկնակետն ու վերջնանպատակը բուն հայրենիքի վերաշինումն էր ու բարգավաճումը, իսկ գաղթավայրերի խնդիրը երկրորդական էր, ոչ առաջնահերթ: Խրիմյանը հորդորում է շինական ժողովրդին, որ նա սիրի հայրենատուր հողն ու դաշտը և երբեք չբաժանվի նրանից: Խրիմյանի պատգամն է հայ ժողովրդին՝ անթառամ պահել սերն առ հայրենիք, երբեք, ոչ մի պայմաններում չլքել այն:

Կ. Պոլսից վերադառնալով հայրենիք ու ծավալելով լուսավորական լայն գործունեություն՝ Խրիմյանն իր դեմ լարեց պահպանողական հոգևորականներին, որոնք հազար ու մի շինծու մեղադրանքներ և զրպարտություններ էին տարածում նրա մասին: Բազմատեսակ խոչընդոտները հաղթահարելու համար ազգային գործչին անհրաժեշտ էր դրսևորել սառնասրտություն ու հանդարտություն, անկոտրում կամք, կորով ու հոգեկան վիթխարի լարում, սեփական գործի արդարացիության հստակ գիտակցություն: Հասուն ու կայացած ազգային-հոգևոր գործիչ Խրիմյանը լի էր հավատով ու լավատեսությամբ, ավյունով, ուներ իրատես ու խորաթափանց հայացք, մեծապես հավատում էր մարդկային բանականության, արդարության հաղթանակին, զերծ էր հոռետեսությունից:

Ռաֆֆին արևելահայության շրջանում գրեթե նույն հեղինակությունն ու սերն էր վայելում, ինչ Խրիմյանը՝ արևմտահայության: Ուստի պատահական չէ, որ երկու վիթխարի գործիչները ոչ միայն հոգեհարազատ համախոհներ ու գաղափարակիցներ էին՝ հավասարապես սիրված ու հարգված համայն հայության կողմից, այլև բարձր են գնահատել միմյանց, խոր հարգանքով ու ակնածանքով արտահայտվել մեկմեկու մասին, բազմիցս հանդիպել իրար ու արժեքավոր տողեր հանձնել թղթին:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

Քրիստոնեական մարդասիրությունը «Մայրենիի խելացի ընթերցարան»-ներում

↩ էջ 7

Նա Հայոց աշխարհի բոլոր կողմերից երգչախմբի համար ձայներ ժողովեց՝ և՛ Տարոն աշխարհից, և՛ Վանից, և՛ Շիրակ ու Գողթան աշխարհներից» (էջ 107):

Ընթերցարանում հայրենասիրական բանաստեղծություններ կան մեր մեծերից՝ Վ. Տերյան, Ա. Իսահակյան, Հ. Սահյան, Պ. Սևակ, Հ. Շիրազ, Ս. Կապուտիկյան, Վ. Դավթյան, Ռ. Դավոյան:

Հ. Սահյանի «Անունդ տալիս» քերթվածում թշնամու կողմից ավերված բերդի կողքին հիշատակվում են քրիստոնեական մատուռն ու տաճարը: Այնքան թանկ է Հայոց աշխարհը Ռազմիկ Դավոյանի համար, որ նա իր բանաստեղծությունը կոչել է «Հայոց աշխարհ-եկեղեցի» (էջ 168):

Ինչպես 5-րդ, այնպես էլ 6-րդ դասարանների ընթերցարանները բոլոր հեղինակներին ներկայացնում են համառոտ կենսագրությամբ, ընդգրկված ստեղծագործությունների անծանոթ բառերի բացատրական բառարանով և բազմահարց առաջադրանքներով:

Երկու դասարանների գրքերում ընդգրկված են նաև օտարազգի նշանավոր գրողների և արդի հայ գրողների ուշագրավ ստեղծագործություններ, այլ ժողովուրդների էպոսներից հվատվածներ:

6-րդ դասարանի աշակերտին ընթերցարանը ծանոթացնում է Ռաֆֆու «Սամվել», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպերին, Հ. Մաթևոսյանի արձակին: Դասական դարձած գրողների գործերի կողքին տեսնում ենք մերօրյա հեղինակներին՝ Ռ. Շառոյանին, Հ. Վարդումյանին և ուրիշների:

Հրաշք բանաստեղծություն է 6-րդ դասարանի ընթերցարանում զետեղված Բ. Սիմոնյանի «Ես գիտեմ՝ ով եմ» քերթվածը: Հենց սկզբից երևում է բանաստեղծի քրիստոնյա ինքնությունը.

Ես հնամենի մի լեռնաշխարհ եմ,
Այս աշխարհի մեջ մի բուռ նշխար եմ... (էջ 108):

Ժողովածուում ընդգրկված է Իսահակ վարդապետ Պողոսյանի «Յոթ առաքինություններ» նյութը, որը հիշեցնում է հայ միջնադարի մեծ փիլիսոփա Գ. Տաթևացու քարոզագրքերի իմաստուն խոհերը (էջ 50–51):

6-րդ դասարանի ընթերցարանում երկու նյութ անմիջականորեն կապվում է Հայ Եկեղեցու պատմության հետ: Առաջինը կոչվում է «Էջմիածին»: Տրվում է պատմական ակնարկ այն մասին, թե հայ ժողովրդի գլխավոր սրբավայրը մինչև Էջմիածին կոչվելն ինչ անուններ է ունեցել: Այդ առումով հիշատակվում է հայ հին վիպասքում հիշատակվող Արտեմիդ անունը, հետո՝ Նոր քաղաքը, հետո՝ Վաղարշապատը: Ի վերջո բացատրվում է, թե ինչպես Գ. Լուսավորչին երևացել է Հիսուս Քրիստոսը և մատնացույց արել Մայր տաճարի կառուցման վայրը (էջ 53):

Վեցերորդ դասարանի աշակերտները ընթերցարանի միջոցով լրացուցիչ գիտելիքներ կստանան նաև հայ ճարտարապետության փառքերից մեկի՝ Զվարթնոց տաճարի վերաբերյալ: Տաճարի կառուցման մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդել 7-րդ դարի պատմիչ Սեբեոսը, որը տաճարի կառուցման ժամանակահատվածի ականատեսն է: Ըստ Սեբեոսի՝ «Ներսես Շինարար կաթողիկոսը (Ներսես Գ Տայեցին.– Ա. Դ.)՝ որպես նրբանկատ մարդ, անհարմար գտավ բազմաթիվ կրոնավորների՝ Վաղարշապատ քաղաքի կենտրոնում՝ Կաթուղիկեի մոտ, բնակվելը: ....Կառուցվեց հոյակապ տաճար.... Եվ քանի որ հիմքում ամփոփվեց Գրիգոր Լուսավորչի մասունքը, իսկ տեղագրական առումով էլ գտնվում էր Առապար Վաղարշապատի սահմաններում, այստեղից էլ տաճարը կոչվեց Առապարի Ս. Գրիգոր» (էջ 59): Բացատրվում է, թե ինչու է տաճարը կոչվել Զվարթնոց: Հենց տաճարի տեղում Գրիգոր Լուսավորչի աչքին երևացել են հրեշտակները, այսինքն՝ զվարթունները, որոնք անմահ են: Տաճարը հայ ճարտարապետության գլուխգործոցներից է, և, ինչպես Սեբեոս պատմիչն է ասում, այն արժանի էր Աստծուն:

Ընթերցարաններում ներկայացված են աշակերտների մտածողությունը զարգացնող հետաքրքիր հարցեր ու առաջադրանքներ:

Ավետարանում Հիսուս Քրիստոսը սրբություն է համարում ընտանիքը: Հայկական ընտանիքի ամրության գովքը տեսնում ենք «Սասնա ծռեր» էպոսում, Գ. Նարեկացու «Ընդդեմ թոնդրակեաց» թղթում, այլ գրողների ստեղծագործություններում: Ազգերն ամրանում են օրինակելի ընտանիքներով: Կարելի է վկայաբերել Օրբելիների ընտանիքը, որի երեք որդիները համաշխարհային հռչակի գիտնականներ դարձան, իսկ Հովսեփ Օրբելին 1943-ին ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիր նախագահ: Ահա այս կարևոր դաստիարակչական գաղափարը հայ դպրոցականի մտածողության մեջ ամրապնդելու համար ընթերցարանի հեղինակները զետեղել են հայ ազգային հերոս, լեգենդար զորավար Անդրանիկ Օզանյանի մասին պատմող զրույցը, որն առ այսօր հիշում են Սիսիանում: 1918 թվականին և նրան հաջորդող տարիներին Անդրանիկն իր զինվորներով ու Արևմտահայաստանից եկած գաղթականներով եղել է Սիսիանում և գործնականորեն նպաստել, որ երիտասարդներն ամուսնանան ու զավակներ ունենան: Նա ասել է. «Ամուսնանալն էլ պարտք է ազգի առաջ: Հայությունը չի կարող մեռնել: Հայության ծառը պիտի ճյուղ տա, պտղաբերի: Էդ ծառը հիմա դուք եք: Հավանեք իրար, հարմարվեք, զույգեր կազմեք: Ես ձեզ ծնող, հարսնախոս, քավոր ու քահանա: Ես ձեզ պսակող» (էջ 65):

Հինգերորդ ու վեցերորդ դասարանների խելացի ընթերցարանների հեղինակները հասել են իրենց նպատակին: Նրանք աշակերտներին բազմակողմանի զարգանալու, երևակայությունը, տրամաբանությունը ընդլայնելու բանալիներ են տվել, և կասկած անգամ չի կարող լինել վարժ, սահուն, իմաստն ընկալող ընթերցանության հմտության համար: Աշակերտը կսիրի իր ընթերցարաններն ու կկապվի գրքերի աշխարհի տիեզերական անսահմանության հետ:

Ալիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 15.05.2026 թ.
Տպաքանակը՝ 915